

ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՏԵԳԵԿԱՏՈՒ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 91, ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2012



ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՂԹԱՆՔ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ
Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՕԾՄԱՆ 17-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱՌԹԻՒ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

դարձաւ Վեհափառ Հայրապետի նիրեալ ծառայութեան բազում երեսներին, քաջ հովապետի պատկերի մէջ: Նա Սպահանի Հայոց Թեմի ազգային իշխանութեան, հոգեւորականաց դասի, եկեղեցու սպասաւորների եւ Թեմի ողջ ժողովրդի անունից արեւշատութիւն մաղթեց Վեհափառ Հայրապետին եւ շնորհաւորեց նրան իր 17-ամեայ աստուածահաճոյ հովապետական ծառայութեան առթիւ:



Առաջնորդ Սրբազան Հայրը, հակիրճ կերպով խօսելով Վեհափառ Հայրապետի բազմատեսակ գործունէութեան մասին, յատուկ կերպով շեշտեց, որ նրա շնորհիւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին միջազգային զանազան ատեններում ուշադրութեան կենտրոն է հանդիսացել եւ իր արժանիքներն է ի սպաս դրել ո՛չ միայն հայութեան, այլ համայն քրիստոնէայ աշխարհի հոգեւոր եւ բարոյական արժէքների պահպանման ու զարգացման նիրական աշխատներում:

Կիրակի՝ 2012 թականի յուլիսի 1-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում մատուցած Ս. Պատարագի ընթացքում, որին նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք, Մեծի Տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 17-րդ տարեդարձի առիթով:



Ս. Ստեփանոս եկեղեցում, Տէրունական Աղօթքից առաջ, առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ, որի ընթացքում հոգեւորականաց դասը անտարանական հատածներ ընթերցեց, եւ աղօթքներ կարդաց, աստուածահաճոյ ծառայութիւն եւ երկար կեանք մաղթելով Վեհափառ Հայրապետին եւ անասանութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական սուրբ Աթոռին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Հայրապետական Մաղթանքից յետոյ, իր քարոզի մէջ, բնաբան ունենալով անտարանական այն հատածը, որտեղ Քրիստոսը խօսում է «Քաջ Հովիւ»-ի մասին, անդրա-

Օ՞ճ ի ԲժàæªÚÆêàôê ø ÐÆêî àêÆ ä² ÚÌ ² è ² Î °ճààôÂ °² Û î úÛÀ
Ûàð æàôÔ² ÛàôØ, ö °ճÆ² ¶ ² ô² è Բ ´ àÈàð² Û °ô Ô² ծÔàôÛ ¶ ԲôÔ°ճàôØ

Կիրակի՝ 2012 թվականի յուլիսի 15-ին, Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան Տօնի առիթով իր հովվական այցելութիւնը տւեց Փերիա գաւառի Բոլորան գիւղի հայ համայնքին: Նոր Ջուղայից եւ այլ հայկական համայնքներից ժամանած հայորդիներ, ովքեր Վարդավառի Տօնը նշելու համար կեցութիւն էին հաստատել գիւղի շրջապատում, դիմաւորեցին առաջնորդ Սրբազան Հօրը եւ նրան ընկերակցող շքախմբին:



Բոլորանի Ս. Ղուկաս եկեղեցում, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, տօնի առթիւ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը: Ներկայ էին Ծափինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ բարեպաշտ հայորդիներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագի քարոզի պահին կենտրոնանալով մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան Տօնի խորհրդի

վրայ, իր պատգամը փոխանցեց ներկայ հաւատաւոր ժողովրդին, շեշտելով, որ տօնի պատգամը մեր հոգիների, սրտերի ու մտքերի մաքրելն է ապականացնող խորհուրդներից եւ իրար վրայ սրկած ջուրը՝ խորհրդանիշ արատներից եւ մեղքերից սրբելու եւ մաքրութեան:

Թեմակալ առաջնորդը Ս. Պատարագի արարողութիւնից յետոյ, իրեն ընկերակցող խմբի եւ եկեղեցու վարչութեան անդամների հետ, այցելեց գիւղի շրջապատում կեցութիւն հաստատած ժողովրդին եւ մասնակից եղաւ նրանց ուրախութեանը:




Եկեղեցու վարչութեան միջոցով կազմակերպւած ճաշկերոյթի ընթացքում, առաջնորդ Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքն ուղղեց գիւղի հայ համայնքին եւ մասնաւորաբար եկեղեցու վարչութեանը, որոնց կատարած աշխատանքի շնորհիւ եկեղեցին մնում է մաքուր եւ բարեգարդ վիճակի մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրն աւարտելով իր հովվական այցելութիւնը, կէսօրից յետոյ Նոր Ջուղա վերադարձաւ:

Նոյն օրը Ղարղունի Ս. Նշան եւ Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցիներում եւս մատուցեց Ս. Պատարագ: Ղարղունի եկեղեցում պատարագիչ քահանան էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Չարգարեանը, իսկ Նոր Ջուղայում՝ Ս. Յովհաննու եկեղեցու նախկին հովիւ արժն. Տ. Կոմիտաս քհնյ. Թորոսեանը, ով այժմ ծառայում է Ա.Մ.Ն.-ի Գլխնդել քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցում եւ հիւրաբար Նոր Ջուղայ էր գտնուում: Երկու եկեղեցիներում եւս ներկայ էին հաւատացեալ ուխտաւորներ, ովքեր լսելով քահանայ հայրերի յաւուր պատշաճի քարոզները՝ լիցքաւորւած օրւայ խորհրդով հաղորդ դարձան մեր Տիրոջ փրկագործական տնօրինութեանը:

**Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱԿԻՆՇԱԿՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ
ՅԸՆԹԱՅՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱԳՕԹՔ ԲԱՐՁՐԱՅԷՅԷՑ ԱՌ ԱՍՏԻԱԾ ՍԻՐԻԱՅԻ ԽԱԳԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ
ՍԻՐԻԱՏԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱՏՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**



Կիրակի՝ օգոստոսի 12-ի առաւօտեան, Ս. Աստ-
ւածածնի Վերափոխման Տօնի առթիւ Նոր Զուղայի
եւ Շահինշահրի եկեղեցիներում, մեծաթիւ հաւատա-
ցեալների ներկայութեամբ, մատուցեց Ս. եւ անմահ
Պատարագ եւ կատարեց ասանդական Խաղողօրհ-
նէքի արարողութիւնը:

անանակոչութեան տօնն էր:



Յընթացս Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազան
Հայրն իր հայրական պատգամն ուղղեց ժողովրդին,
որում անդրադառնալով Ս. Կոչսի կեանքին՝ նշեց եկե-
ղեցական շարականներում տեղ գտած Աստուծա-
մօր անկանները: Թեմակալ Առաջնորդն իր խօսքի
շարունակութեան մէջ ասելով, որ կնոջ սկզբնական
կոչումը մայրութիւնն է, կոչ ուղղեց բոլոր կանանց ու
մայրերին իրենց կեանքում օրինակ դարձնեն Ս.
Աստուածածնին:

Օրայ պատարագիչներն էին, Շահինշահրի
«Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում համայնքի
հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը,
իսկ Նոր Զուղայում, Ս. Մինաս եկեղեցում՝ արժն. Տ.
Վաղինակ աւ. քինյ. Շահիջանեանը, Ս. Ստեփանոս
եկեղեցում՝ արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանը,
Ս. Աստուածածին եկեղեցում՝ արժն. Տ. Խաչատուր
քինյ. Զարգարեանը եւ Ս. Յովհանու եկեղեցում՝
արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկէրեանը: Սպահանի
Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զա-
րեանը նախագահեց Նոր Զուղայի Ս. Աստուածածին
եկեղեցու Ս. Պատարագին, որը նաեւ նշւած եկեղեցու

Ս. Պատարագի ասարտին առաջնորդ Սրբազան
Հօր միջոցով կատարեց ասանդական Խաղողօրհնէ-
քի արարողութիւնը:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի տնօրինու-
թեամբ Շահինշահրի եւ Նոր Զուղայի եկեղեցիներում
մատուցող Ս. Պատարագի ընթացքում՝ «Տէր Ողոր-
մեայ»-ի ժամանակ, աղօթք բարձրացեց առ Աստ-
ւած՝ Սիրիայի խաղաղութեան եւ սիրիահայութեան
ապահովութեան համար:

Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ ՓԵՐԻԱ ԳԱԽԱՌԻ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵՎԵՂԵՑՈՒՄ

Ուրբաթ, օգոստոսի 10-ի առաւօտեան, Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, ընկերակցութեամբ Թեմի Կրօնական Խորհրդի ներկայացուցիչների, մեկնեց Փերիա գաւառի Խոյգան գիւղ՝ մասնակցելու եւ նախագահելու գիւղի 120-ամեայ Ս. Աստուածածին եկեղեցում մատուցող Ս. եւ անմահ Պատարագին՝ Աստուածամօր Վերափոխման եւ եկեղեցու անւանակոչութեան տօների առթիւ: Օրայ պատարագիչն էր արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը:



Արարողութեանը ներկայ էին նաեւ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Չարգարեանը, դպրաց դասը եւ ուխտաւոր հաւատացեալներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ պրն. Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ:



Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազան Հայրն օրան պատշաճ իր հայրական պատգամը փոխանցեց հաատաւոր ժողովրդին՝ ասելով, որ իւրաքանչիւր տարւայ ընթացքում նշուում են եօթ տօներ՝

նիրւած Աստուածամօրը, իսկ Ս. Աստուածածնի Վերափոխման Տօնն ամբողջացնում եւ լրացնում է սուրբին նիրւած միւս բոլոր տօները:



Սրբազան Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով Աստուածամօր դերակատարութեանը, ասելացրեց. «Ս. Կոյս Մարիամը լոյս աշխարհ բերեց մի Փրկչի՝ մարդկութեանը ղէպի փրկութիւն առաջնորդելու, մեղքերից հեռացնելու եւ չարից ազատելու համար: Եթէ մեր նախածնող Եւան անհնազանդ գտնեց Աստծու պատկիրանների նկատմամբ եւ մեղքի ու մահւան սկիզբ հանդիսացաւ, Ս. Կոյս Մարիամը հրեշտակապետի աւետման առաջին իսկ պահից, հնազանդեց Աստծուն եւ նոր կեանքի սկիզբը հանդիսացաւ: Աստուածածինը դարձաւ մայրութեան տիպար ու ցոյց տւեց կնոջը, որ իր առաջին կոչումը մայրութիւնն է: Հետեւաբար, բոլոր կանայք ու մայրեր պէտք է հետեւեն Աստուածամօր օրինակին»:

Սրբազան Հայրն իր հայրական պատգամի աւարտին շնորհաւորելով ներկաներին Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու անւանակոչութեան տօնի եւ 120-ամեակի առթիւ, յիշեց մեզանից առյաւէտ հեռացած, եկեղեցու կառուցման ու պահպանման գործերում դերակատար նիրեալներին եւ աղօթեց նրանց հոգիների խաղաղութեան համար: Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքն ուղղեց նաեւ եկեղեցու յանձնախմբին եւ միւս նիրեալներին, ուժ ու կորով մաղթելով նրանց՝ իրենց ազգանւէր աշխատանքներում:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ աւանդական Խաղողօրհնէք եւ բարեպաշտ ժողովրդի միջոցով եկեղեցի բերած խաղողը Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ օրհնելուց յետոյ, բաժանեց ներկաների միջեւ:

Շարունակութիւն՝ 9-րդ էջում

**ՓՈՔՐ ՀԱՏԻԱԾ ՓԵՐԻԱՅԻ
ՎԵՐԻՆ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ
Ս. ԱՍՏԻԱԾԱԾՈՒՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
120-ԱՄԵԱԿԻ ԵՒ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿԵԱՆՔԻՑ**



Շահ-աբբասեան բռնագաղթով հին Ջուղայից եւ շրջակայ գիւղերից բռնագաղթեալ հայութիւնը, 1606 թականին, բնակութիւն հաստատեց Իրանի տարբեր շրջաններում, մասնաւորաբար երկրի մայրաքաղաք Սպահանում, իսկ գաւառներից գաղթած հայութիւնն իրենց ծննդավայրի կլիմային հարազատ գտաւ Փերիայի շրջանը եւ նրանցից մի հատուած հաստատեց այդ շրջանում եւ հիմք դրեց տարբեր գիւղեր, որոնցից մէկն է Փերիայի Վերին Խոյգան գիւղը:

Գիւղն ունեցել է տարբեր ազգատոհմեր, ինչպէս՝ Միմասեան, Հայրապետեան, Յարութիւնեան, Առաքելեան, Մատթէոսեան, Տէր-Մակարեան, Ղուրշեան, Բարսեղեան, Թորոսեան, Խաչիկեան, Եղիկեան, Եղսանեան, Իսախանեան եւ այլ փոքր ազգատոհմեր, որոնք կազմել են գիւղի երեք թաղը: Բացի յիշեալ ազգատոհմերից եղել է Այլազեան մեծ տոհմը, որը զաւակների անամբ սկիզբ է տւել տարբեր ազգանուններով գերդաստանների, ինչպէս՝ Տէր-Յովհաննիսեան, Տէր-Մկրտիչեան, Նաւասարդեան, Մարկոսեան, Իսա-

ղուեան եւ նրանց զաւակներն էլ ճիւղաւորելով՝ ստեղծել են Շահվերդեան, Աստուածատուրեան, Վարդումեան, Սարգսեան, Օհանեան եւ այլ գերդաստաններ:

Գաղթեցած հայութիւնը 400 տարի ապրելով հայրենիքից հեռու, հաւատարիմ մնալով իր կրօնին, մշակոյթին ու ասանդութիւններին, կառուցել է եկեղեցիներ, կրթօջախներ եւ մշակութային կենտրոններ:

Նորակառոյց գիւղը 1610 թականին կառուցում է Ս. Յովհաննէս եկեղեցին, իսկ նրա կողքի սենեակներ՝ օգտագործելու որպէս ուսուցման կենտրոն:

Ժողովուրդը բազմանում է եւ գիւղն ընդարձակում: 1789 թականին Այլազեան տոհմը լրիւ իր ազգ-ընտանիքով գնում են Բուրարի գաւառ Գովզ գիւղ եւ հաստատելով այնտեղ՝ զբաղւում են հողագործութեամբ: Այլազեան տոհմը 30 տարի ապրելով Բուրարի Գովզ գիւղում, չունենալով ոչ մի կորուստ եւ հաւատացած լինելով, որ այդ հողն իրենց չի ընդունում, 1819 թականին ազգովին վերադառնում են իրենց ծննդավայր Խոյգան գիւղը եւ այնտեղ բնակութեան տեղ չլինելու պատճառով հիմնում են նոր թաղամաս՝ շարունակելով նախկին կեանքը: Նկատի ունենալով, որ գիւղում եղած եկեղեցին չէր բաւարարում ժողովրդին, նաեւ նորակառոյց թաղամասից հեռու էր գտնուում, 1892 թականին նոր թաղամասում կառուցում են Ս. Աստուածածին անունով եկեղեցի:

Առ այն, որ հայոց պատմութեան մէջ ուսուցման կենտրոնը եկեղեցու լրացուցիչ մասն է կազմել, տոհմից Մնացական Մարկոսի Այլազեանը 1892 թականին ոտքով մեկնում է Իրանի հարաւը՝ Բուշեհր նաահանգիստը, նաւով մեկնում է Հնդկաստանի Կալկաթա քաղաք եւ դիմելով ազգային բարերարներից՝ դպրոցի կառուցման համար գումար, զանգ, լուսատրութեան ջախ եւ այլ իրեր է հանգանակում, եւ 1895 թականին դրանք հասցնում է գիւղ եւ ըստ նկրատումների ցանկութեան եկեղեցուն կից կառուցած դպրոցն անւանում է Ս. Մինաս: Խոստում է տրուում, որ տարին մէկ անգամ Հնդկաստանի Ս. Մինաս եկեղեցուն գանձանակ պահի եւ հանգանակած գումարով հոգացի դպրոցի մէկ ուսուցչի աշխատավարձը:

Յատկանշելի է, որ դպրոցին պատկանող յուշաքարը, որը հետեւեալ մակագրութիւնն ունի, մինչ այժմ գտնուում է եկեղեցու մուտքի պատին.

«Յամի Տեառն 1895 'ի մի մայիսի կառուցաւ սուրբ Մինաս դպրոցս այս արդեամբ եւ ծախիւք ազգասէր մերազնեաց Կալկաթու որ ի Հնդկաստան»:

Յիշեալ տոհմի արձանագրութիւնը, մինչեւ 1940 թականը, ի մի է բերել տոհմի զաւակներից ժամանակի գիւղի տանուտէր, ազգային հասարակական եւ գաղափարկան գործիչ Միքայէլ Թովմասի Տէր-Յովհաննիսեանը, իսկ շարունակութիւնը, 1981 թականին, իր աւարտին է հասցնում եւ պատրաստում է գերդաստանի ազգատոհմի ծառը իր զաւակը՝ Հրանդ Մ. Տէր-Յովհաննիսեանը, որը վերստուգել է 1996 թականին:

Բանասէր պրն. Լեւոն Գ. Միմասեանը, Ս. Ամենափրկչեան Վանքի արխիւները պրպտելիս բացայայտում է մէկ նամակ՝ գրւած 1800 թականին, ձեռամբ Սանգիբարան գիւղից Բաղումի որդի Եսայիի, ուր գրւած է Այլազ Մկրտումի մահւան մասին, որը տեղի է ունեցել Իրաքի Բասրա քաղաքում եւ իբր իր ունեցածքն ուղարկել է Վանք՝ յանձնելու իր զաւակներից՝ Հայրապետին, Մնացականին եւ Դովլաթեարին: Այդ նամակում բացայայտում է Այլազի հօր անունը, նրա մահւան թականը եւ վայրը:

Գիւղն ընդարձակելով, հետագային կազմում է երրորդ թաղա-

մասը եւ 1927 թականին կառուցում է Ս. Ներսէս եկեղեցին:

200 տարուց առաջ գիղում ծառայած եւ ձեռնադրած քահանաների ցանկ գոյութիւն չունի. յիշենք Թեմի ժամանակի առաջնորդ Ս. Խաչատուրի ձեռամբ 1840 թականի օգոստոսի 7-ին Ս. Աստուածածնի Վերափոխման Տօնին գիղի Ս. Յովհաննէս եկեղեցում ձեռնադրած Ս. Յովհաննէս եւ Ս. Մկրտիչ քահանաներին: Հետագային ձեռնադրում են Ս. Ատոմ Տէր-Յովհաննիսեան, Ս. Արշամ Տէր-Մկրտիչեան, Ս. Արսէն Աստուածատուրեան, Ս. Եսայի Վարդումեան, Ս. Եփրեմ Իսաղուլեան, Ս. Յովսէփ Տէր-Յովհաննիսեան եւ գիղի վերջին հոգեւորական Ս. Տիգրան Վարդումեան քահանաները:

Գիղում բացի յիշեալ տոհմից եղել են այլ քահանաներ, ինչպէս՝ Ս. Վրդանէս եւ իր տղան՝ Ս. Մարգար Ամիրեանները, Ս. Մակար Խաչիկեանը, Ս. Աւետիս Ամրանեանը, Ս. Արշամ եւ Ս. Համազասպ Առաքելեանները: Յիշեալ քահանաներից շատերը գաւառի դպրոցներում ուսուցիչ են եղել:

Ուսուցման աշխատանքը կենտրոնացնելու եւ կենտրոններն ի մի բերելու նպատակով, 1938 թականին գիւղացիների համընդհանուր աշխատանքի շնորհիւ երկու հեկտար տարածութեան վրայ կառուցում է կենտրոնական գիւղատնտեսական դպրոց, ունենալով Եւրոպայում ուսանած Գրիգոր Մխիթարեան անունով ուսուցիչ: Նկատի ունենալով, որ դպրոցին յատկացւած հողատարածքը ջրի կարիք ունէր, գիւղացիների մտադրացումով գիւղից երկու կիլոմետր հեռու աղբիւրի ջուրը կաւէ խողովակներով (գունգ) տեղափոխում են գիւղ՝ երեք բաժին անելով, երկուսը՝ ժողովրդի խմելու համար, իսկ երրորդը յատկացւում է դպրոցի հողատարածքին, տարբեր ծառեր եւ բոյսերի անեցման համար:

1890 թականից սկսած, հայոց ազատագրական պայքարի շունչն ու ոգին հասնելով Փերիա, 1931 թականին գիղում հիմնում է «Արօր» Միութիւնը, ունենալով իր ծրագրականոնագիրը, իսկ Միութեան 50

տղաներից կազմւած պաշտպանական խմբին վստահում է գիւղի ապահովութիւնը՝ շրջակայ աւազակախմբերից:

Յետագային հիմնում են «Սիս», «Ծաղիկ», «Կանանց Եկեղեցատէր» եւ «Փերիայի Կրթասիրաց Մասնաճիւղ» միութիւնները, իսկ Արահամ Ամիրեանի նախաձեռնութեամբ հիմնադրւած կոպերատիւթիւնը կարեւոր դերակատարութիւն է ունենում գիւղի կարիքները հոգալու գործում:



Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ ռեզա-խանեան բռնապետութեան հետեւանքով փակւած հայոց դպրոցների աշխատանքի բացը լրացնելու նպատակով, 1945 թականի ապրիլ 9-ին Ս. Աստուածածին եկեղեցում վաստակաւոր ուսուցիչ եւ բանասէր Լեւոն Գ. Մինասեանն իր հետ ունենալով գիւղի երիտասարդներից Հայկ Տ. Յովհաննիսեանին, Լեւոն Հայրապետեանին, Աշխէն Ղուրչեանին, Տրդատ Տ. Յովհաննիսեանին, կազմում են հիմնադիր խումբ եւ վարչութիւն, եւ հիմնադրում են «Արովեան» գրադարանը, ունենալով հիմներգ՝ հեղինակած Լ.Գ. Մինասեանի միջոցով, եւ կանոնակարգ: Կազմը հաւաքելով մեծ քանակութեամբ գրքեր՝ տրամադրում է դիմողներին՝ ընթերցելու, մէկ շաբաթ ժամանակով, եւ ստանում չնչին գումար, իսկ աշակերտներին՝ անվճար: Վերջին շրջանում գիւղի հայութեան թաքսանակը նազելով, գրադարանի մեծաքանակ գրքերը յանձնում են Թեհրանի «Սիփան» Միութեանը:

Գիւղի բնակչութիւնից որոշ ընտանիքներ 70-ական թականներին ներգաղթեցին հայրենիք եւ իրենց հետ տարան եւ Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անան Մատենադարանին յանձնեցին հայկական ձեռագրեր, որոնց թումբ՝ 6 ձեռագիր Աւետարան Տէր Յովհաննիսեանների կողմից եւ մի մեծ Յասմավուրթ, որը գիղում հաստատւած երկրորդ սերնդից Այազը 1789 թականին Իրաքի Բասրա քաղաքից գնում եւ ուղարկում է իր թոռներին՝ ուլքեր քահանայ էին ձեռնադրել՝ Ս. Յովհաննէս եւ Ս. Մկրտիչ վերանանելով:

Վերջերս Ս. Աստուածածին եկեղեցին ունէր 2 ձեռագիր Աւետարան, որոնք պահւում էին հանգուցեալ Արշամ Տ. Մկրտիչեան եւ Պօղոս Ղուրչեան ընտանիքների մօտ: Թեմիս Կրօնական Խորհրդի հետեւողականութեամբ, դրանցից մէկը Արշամ Տ. Մկրտիչեանի գաւառի՝ Սերոժի եւ գերդաստանի աւագների միջոցով յանձնում է Ս. Ամենափրկչեան Վանքի մատենադարան, իսկ միւսը Ղուրչեան ընտանիքի

Շարունակութիւն՝ 9-րդ էջում

ՉԱԻՎԻՔԻՆ ՆԻԻՐ- ԻԱԾ ՄԻՆՈՅՎՈՒՈՒՄ ԳԻՏԵԼԻՔ ՆԵՐԻ ՄՐՅՈՅՈ

Նոր սերնդին Ջաախքին եւ ջաախքահայութեանն առաւել ծանօթացնալու նպատակով, Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախումբն ի շարս Ջաախքին նկիրւած իր աշխատանքների, չորեքշաբթի՝ յուլիսի 4-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում կազմակերպեց գիտելիքների մրցոյթ՝ մասնակցութեամբ Նոր Զուղայի եւ Ծահինշահրի հայոց ազգային տարրական ու ուղեցոյց դպրոցների աշակերտութեան:

Մրցոյթին պատրաստուելու համար մասնակիցներին էր տրամադրուել սկաւառակներ եւ գրքոյկներ, որտեղ ներառուած էին նկարներ, տեսանկիւներ, քարտէզներ եւ լուսանկարներ՝ Ջաախքի աշխարհագրութեան, պատմութեան ու ներկայ իրավիճակի եւ Ջաախքում հասակ առած նշանաւոր հայերի վերաբերեալ: Սոյն գրքոյկների եւ սկաւառակների պատրաստման համար կեանքի էին կոչուել առանձին եւնթայանձնախմբեր:

Խմբերի արձանագրման եւ կազմակերպման համար յանձնախմբի հետ սերտ համագործակցել էին մասնակից դպրոցների տեսչութիւնները: Երկու մրցոյթների ընթացքում ակտիւ աշխատանք ցուցաբերեցին իրաւարար կազմի անդամներ՝ Ադրինէ Ղեւեանը, Աքաուլթ Նայրապետեանը, Արթին Մուրադեանը եւ համակարգչային բաժնի պատասխանատու Վերգինէ Միրզախանեանը, ովքեր դերակատար էին եղել նաեւ հարցերի ընտրութեան գործում:

Երեկոյեան ժամը 5:30-ին տեղի ունեցաւ տարրական բաժնի մրցոյթը, որին մասնակցել էին 6 խմբեր՝ Նոր Զուղայի «Արմէն» հմալիրի եւ Ծահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի չորրորդ եւ հինգերորդ դասարանների աշակերտներից: Սոյն մրցոյթին աշակերտներից եւ նրանց հարազատներից բացի, ներկայ էին նաեւ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ.

Գունանեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, ազգային մարմինների, հայոց ազգային դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներն ու համայնքի անդամներ:



Սկզբում հաղորդավար Լաուրա Խուրաբախչեանը ողջունելով ներկաներին, բացատրութիւններ տուեց մրցոյթի ընթացքի եւ կանոնների մասին, ապա բոլորին ներկայացրեց իրաւարար կազմին եւ մասնակից խմբերի անդամներին: Այնուհետեւ մրցակից խմբերի հերթականութիւնը ճշտուեց վիճակահանութեամբ, եւ առաջին փուլում մրցեցին «Նեմրոյթ», «Փիւնիկ» եւ «Բուռնցք», իսկ երկրորդ փուլում՝ «Արցախ», «Հայկական լեռնաշխարհ» եւ «Գուգարք» խմբերը:



Մրցութեան հարցերը բաժանուած էին երեք բնագաւառների՝ աշխարհագրութիւն, Ջաախքի պատմական ու ներկայ իրավիճակ եւ նշանաւոր ջաախքցիներ: Իւրաքանչիւր բնագաւառի հարցերը խնամքով դասաւորուել էին թերի հերթականութեամբ: Խմբերն առանձնաբար ընտրուելով հարցերը՝ պատասխանում էին դրանց, որից յետոյ տեսնուելով պատասխանի վրայ ցուցադրող ճիշտ պատասխանը՝ գնահատում էին իրաւարար կազմի կողմից: Իսկ մրցոյթի ընթացքում հնչում էին նաեւ ընդհանուր գիտելիքների հարցեր, որոնց պատասխանելու առիթը միայն տրուում էր սեղանների վրայ տեղադրուած զանգերն աւելի շուտ հնչեցնող խմբին: Իսկ իւրաքանչիւր փուլի աւարտին տեղի էր ունենում ֆիզիկական մրցոյթներ, որտեղ մասնակիցներն իրենց ուժերն էին փորձում հայկական կոթողների նկարներով փազրլի կառուցմամբ եւ դարթի նետմամբ:

Մրցոյթն ընթացաւ առողջ մրցակցութեան եւ հանելի մթնոլորտի ներքոյ եւ այն եզրափակուեց հետեւեալ արդիւնքով.
Առաջին կարգ՝ «Բուռնցք» խումբ՝

Արամէ Նաւասարդեան, Դերիկ Յակոբեան, Լուսիա Գալուստեան, Լուսիա Մատթէոսեան

Երրորդ կարգ՝ «Արցախ» խումբ՝ Նելիանա Գրիգորեան, Անիշա Խաչեան, Մանէ Յովսէփեան, Վահագն Հայրապետեան

Երրորդ կարգ՝ «Գուգարք» խումբ՝ Տաթևիկ Տ. Մարտիրոսեան, Անի Մկրտչեան, Լուսին Յովսէփեան, Անիա Յովհաննիսեան

Տարրական բաժնի մրցութեան աւարտին իրաքանչիւր մասնակցի շնորհւեց գնահատագիր, իսկ յաղթողներին մրցանակներ՝ ձեռամբ հոգշ Տ. Անանիա վրդ. Գունիմեանի եւ Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի պատասխանատու Վահէ Թորոսեանի:

Վերջում եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ հոգշ. Հայր Սուրբը: Նա գնահատելով կազմակերպիչ յանձնախմբի կատարած աշխատանքը, ասաց. «Յանձնախումբն այսօր հասաւ իր նպատակին, քանի որ ձեզ փոխանցած այս գիտելիքները կեանքի ամբողջ ընթացքում լինելու են ձեզ հետ եւ դուք խորհելու էք դրանց մասին: Կեանքը լի է մրցակցութիւններով, սակայն չպէտք է մոռանանք այսօրուայ գիտելիքները, քանի որ դուք էք մեր ապագան եւ դուք պէտք է տէր կանգնէք Ձաւախքին ու մեր իրաւունքներին՝ ձեր գիտելիքներով: Այսօր բոլորդ յաղթողներ էք»:

Տարրական բաժնի մրցութի աւարտին տեղի ունեցաւ կէս ժամ դադար, որից յետոյ, երեկոյեան ժամը 7:30-ին, սկիզբ առաւ ուղեցոյց բաժնի գիտելիքների մրցոյթը՝ մասնակցութեամբ Նոր Զուղայի «Քանանեան» օրիորդաց եւ «Կատարիներեան» տղայոց դպրոցների աշակերտներից կազմած 9 խմբերի: Սոյն մրցոյթի հաղորդավարութիւնը վստահաւ եր Մանիա Ղուկասեանի:

Մասնակիցներից եւ նրանց հարազատներից բացի, ներկայ էին նաեւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, ազգային մարմինների, հայոց ազգային դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներն ու համայնքի անդամներ:

րի ներկայացուցիչներն ու համայնքի անդամներ:



Մրցոյթն սկսեց հաղորդավարի ողջոյնի խօսքով: Այնուհետեւ վիճակահանութեամբ ճշուեցին երեք փուլերի մասնակիցները եւ բոլորին ներկայացուցին իրաւարար կազմի ու խմբերի անդամները: Մրցութեան ձեւը՝ ֆիզիկական խաղերի կազմակերպումը եւ հարցերի բնագաւառների բաժանումն ու ընտրութիւնը, նոյնութեամբ կրկնեց նաեւ այս մրցոյթում:

Մրցոյթի երեք փուլերի ընթացքում միմեանց հետ մրցեցին հետեւեալ խմբերը.

Առաջին փուլ՝ «Գեղամայ», «Շանթ» եւ «Քաջազնունի», երկրորդ փուլ՝ «Փարանա», «Շուշի» եւ «Ուրարտու», երրորդ փուլ՝ «Նեմեսիս», «Ուրֆա» եւ «Արծիւ»:

Մրցութեան երեք փուլերի աւարտին առաջին հանդիսացաւ բարձր նիշ հաւաքած խումբը՝ «Նեմեսիս»-ը, սակայն երկրորդ եւ երրորդ խմբերը ճշտելու համար՝ իրաւարար կազմը ստիպւած եղաւ հնչեցնել եւս մի հարց՝ համահաւասար նիշեր արձանագրած երկու խմբերի՝ «Ուրարտու»-ի եւ «Քաջազնունի»-ի համար:



Ուղեցոյց բաժնի մրցոյթը եզրափակեց հետեւեալ արդիւնքով.

Առաջին կարգ՝ «Նեմեսիս» խումբ՝ Արինէ Իսաղուլեան, Թանիա Մինասեան, Թինա Յովսէփեան, Վանանդ Իսաղուլեան

Երկրորդ կարգ՝ «Քաջազնունի» խումբ՝ Նարէ Վարդանեան, Շաղիկ Մատթէոսեան, Էջմին Խաչիկեան, Շանթ Ասատրեան

Երրորդ կարգ՝ «Ուրարտու» խումբ՝ Վանէ Ղազարեան, Անի Ղազարեան, Արթուր Սիմոնեան, Բաֆֆի Դիլանչեան

Այնուհետև առաջնորդ Սրբազան Հօր, Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի եւ Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի պատասխանատու Վահէ Թորոսեանի միջոցով գնահատագրեր շնորհեցին բոլոր մասնակիցներին եւ մրցանակներ ներկայացրին:

Վերջում Սրբազան Հայրն իր հայրական խօսքն ուղղելով ներկաներին՝ գնահատեց Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբին՝ Ջալալխանի եւ ջալալխաբահայութեանը ներկա գիտելիքների մրցոյ-

թի կազմակերպման, եւ մասնակից աշակերտներին՝ իրենց մասնակցութեան համար, ապա դիմելով մասնակիցներին, աւելացրեց. «Ձեր մասնակցութիւնն ինքնին յաղթանակ է: Ջալալխանի մասին մտածելը, Ջալալխանի մասին մտահոգելը եւ ընդհանրապէս մեր պատմութեան ու մեր ինքնութեան մասին սովորելը մեր պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է: Հետեւաբար, գնահատում եմ եւ կոչ եմ ուղղում ձեզ, որ շարունակաբար սովորէք, ընթերցէք եւ ձեր գիտելիքները զարգացնէք: Որքան բան իմանաք ձեր ինքնութեան, պատմութեան, հայոց աշխարհի եւ ի մասնաւորի՝ Ջալալխանի մասին, դուք առաւել եւս կը գործնաբար եւ կը զօրացնէք մեզ»:

Կազմակերպիչ յանձնախմբի նախաձեռնութեամբ մասնակիցներին էր տրամադրել Ջալալխանի ներկա գիտելիքների գերազանցողները, որը մասնակիցների միանման զգեստաւորելուց բացի, առանձնապատու գեղեցկութիւն պարգեւեց ծրագրին:



Շարունակութիւն՝ 4-րդ էջից

Ս. ԱՍՏԻՃԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ...

Վերջում Ս. Աստուածածին եկեղեցու բակում ներկայ ժողովուրդը հիւրասիրեց եկեղեցու յանձնախմբի կողմից:

Հարկ է նշել, որ Ս. Պատարագին մասնակցելու նպատակով՝ Փերիոյ Կրթասիրաց Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպել էր ուխտագնացութիւն, որին մասնակցել էին մեծ թուով հաւատացեալներ:



Շարունակութիւն՝ 6-րդ էջից

ՓՈՔՐ ՀԱՏԻՃ ՓԵՐԻԱՅԻ ՎԵՐԻՆ ԽՈՅՂԱՆ...

միջոցով փոխադրում է հայրենիք՝ Մեսրոպ Մաշտոցի անան Մատենադարան:

Գիւղի հայ բնակչութիւնը տեղափոխեց Նոր Զուղա, Թեհրան եւ Հայաստան, եւ այնտեղ բնակչութիւն հաստատեցին լոռ, վրացի, թուրք եւ պարսիկ ցեղախմբեր, իսկ մատնահաշի մնացած հայութիւնը վայելում են նորաբնիկների յարգանքը:

Շնորհիւ ազգային իշխանութեան, ազգայինների եւ գիւղին հաւատարիմ մնացած սերունդների, մինչ այժմ կանգուն են եկեղեցիները, իսկ շրջանի Մշակութային Ժառանգութեան Հաստատութեան ջանքերի շնորհիւ եկեղեցիները գրանցել են երկրի մշակութային ժառանգութեան ցանկում, որոնց համար պետական յատկացումներ կատարելով, Ազգային Առաջնորդարանի վերահսկողութեամբ դրանք վերանորոգում են, որտեղ տարւայ ընթացքում այցելութեան են գալիս տասնեակ հայ ընտանիքներ, իսկ արդէն աւանդոյթ է դարձել՝ ամէն տարի Ս. Աստուածածնի Վերափոխման Տօնին թեմակալ առաջնորդի նախագահութեամբ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում Ս. եւ անմահ Պատարագ մատուցել եւ կատարել Խաղողօրհնէք:

2 օգոստոսի, 2012
Նոր Զուղա

Նիւթը պատրաստեց
Սաքօ Տէր-Յովհաննիսեանը


ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԳ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆԻԻՐԻԱԾ ԶԶ-ՐԴ ԶՈՒՏՔՈՒԼԻ ԽԱՂԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ակաուտական Միաւորի Գերագոյն Մարմնի նախաձեռնութեամբ ամենամեայ կարգով կազմակերպուած են ֆուտբոլի մրցաշար՝ նկիրւած Հայ Յեղափոխական Բանակի հինգ մարտիկներ՝ Սեդրակ Աճեմեանի, Վաչէ Դաղլեանի, Արա Քերշեանի, Սիմոն Եահրնեանի եւ Սարգիս Աբրահամեանի յիշատակին, ովքեր 1983 թականի յուլիսի 27-ին անձնագոհական միակտով Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսբոնում Թուրքիայի դեսպանատան 3-ժամեայ գրաւումից յետոյ, պայթեցրին այն ու նահատակեցին՝ աշխարհին պատգամելով հայ ժողովրդի պահանջատիրութեան արդարացիութիւնը:



Լիսբոնի հինգ մարտիկներին նկիրւած 22-րդ խաղերի բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ երկուշաբթի՝ յուլիսի 30-ին, «Արարատ» Միութեան մարզական բաժնում: Ծրագրի սկզբում ներկայ բացմութիւնը մէկ րոպէ յոտնկայս լուրթեամբ յարգեց հինգ քաջորդիների անմահ յիշատակը: Ողջոյնի եւ բացման խօսքից յետոյ, աւագ խմբապետ Ռոբերտ Սիմոնեանի հրահանգով մուտք գործեց դրօշակակիր եւ հինգ մարտիկների պատկերները կրող Արի-արեւունշական ու Երէցական հատուածից կազմուած խումբը, եւ նշանակուած վայրում տեղաւորելուց յետոյ, կատարեց դրօշակի արարողութիւն, եւ ի յարգանս նրանց՝ ծաղկեպսակ տեղադրուեց պատկերների առջեւ: Այնուհետեւ օրւայ խորհրդի մասին եւ Լիսբոնի հինգ մարտիկների



խօսքերից պատրաստուած նիւթն ընթերցեցին վարիչ-առաջնորդ Նայիրի Թահմազեանը, գայլիկ Դիմն Յովհաննիսեանը եւ արծիկ Տաթևիկ Տէր-Մարտիրոսեանը:

Ապա Ներկաների ծափողջունցների ներքոյ մուտք գործեցին համայնքի երիտասարդներից կազմուած «Արծիւ», «Արարատ», «Բոնուցք», «Ախթամար», «Ուսանողական», «Փոթորիկ» եւ «Փիւնիկ» սիրողական եօթխմբերը:

Արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկէրեանը հրաւիրեց օրւայ առթիւ արտայայտուելու: Նա իր խօսքի ընթացքում ասաց. «Հինգ երիտասարդներ օժևած այն դաղափարական մտքերով, որտեղ տեսնում եւ հաւատում էին, որ անձնագոհութեամբ եւ նահատակութեամբ է, որ Հայ Դատը պիտի հասնի իր յաղթանակին, անտեսելով իրենց կեանքը, իրենց արիւնով բացեցին մի նոր էջ, Հայ ժողովրդի պայքարի գրքի վրայ եւ արիւնով գրեցին մի նոր պատմութիւն: Ես օրհնում եմ իրենց հոգիները եւ Աստուծուն խնդրում, որ նրանց հոգիներին խաղաղութիւն պարգևի եւ երկնքի արքայութեանն արժանի լինեն... Նահատակները սուրբ են, արիւնը սուրբ է եւ կը սրբացնի իրենց պարտքը, իրենց ազգն ու հայրենիքը: Թող Աստուած մեր Հայ ժողովրդին տայ այն հաւատը, այն գաղափարի սէրը, այն հայրենիքի սէրը, որն ունէին այս Հինգ երիտասարդները, ովքեր մեզ համար դարձան երաշխիք եւ օրինակ, որպէսզի իրենց եւ իրենց

Շարունակութիւն՝ 13-րդ էջում

«ԿՈՌՆԱ» ՊԱՐԱՆՈՒՄԸ ՄԵԾ ՏՊԱՌՈՒԹԵԱՄՔ ՎԵՐՊԱՐՁԱԻ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ջ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միության Մշակութային Միալորի «Կոունկ» պարսխումբը մասնակցությամբ՝ Ալինա Տէր-Սուքիասեանի, Անի Ասատրեանի, Աւենիա Բաղրամեանի, Աթինէ ԳասպարՂիասեանի, Մարալ Յարութիւնեանի, Սօսէ Մինասեանի, Վանէ Մինասեանի, Վանէ Իսաղուլեանի եւ ուղեկցությամբ Միալորի Վարչութեան անդամներ Քարմէն Ղեւեանի եւ Լորետա Ասատրեանի, յուլիսի 28-ին մեկնեց Հայաստան եւ մասնակցեց Հ.Հ. Սփիւքի Նախարարութեան կազմակերպած «Իմ Հայաստան» համահայկական փառատօնին: Մինչ մեկնելը, պատիրակութիւնն ստացաւ արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանի օրհնութիւնը:

Փիւղքի Նախարարութեան շէնքում հանդիպում ունեցաւ Նախարարութեան աշխատակազմի եւ փառատօնի կազմակերպիչների հետ, որտեղ «Իմ Հայաստան» փառատօնի ծրագրերի ղեկավար Սամուէլ Յարոյեանը փառատօնին մասնակցելու համար խմբին յանձնեց հաւաստագիր եւ փառատօնի խորհրդանշով յուշանէր, իսկ Միութեան Մշակութային Միալորի Վարչութեան կողմից նախատեսւած յուշանէրը յանձնեց պատիրակութեան ընդհանուր պատասխանատուն:



Խումբը յունիսի 29-ի երեկոյեան մասնակցեց Կասկադ համալիրում կայացած փառատօնի բացման հանդիսատր արարողութեան շքերթին եւ հանդէս եկաւ խմբային պարով:

Նոյն օրն այցելեցին Գեղարքունիքի մարզ, Սեւանի վանքը, երեկոյան ելոյթ ունեցան Սեւան քաղաքում՝ Սուրէն Զաքարեանի անան մշակութային պալատի դահլիճում:

Յուլիսի 2-ի առաւօտեան, պատասխանատուների որոշմամբ, խմբից երեք պարուհիներ մասնակցեցին Խաչատուր Աբովեանի անան մանկավարժական համալսարանի պարարեւտի ամբիոնում կազմակարպած սփիւքահայ պարուսոյցների համար վարպետութեան դասընթացների՝ որն իրականացաւ Հայաստանի Ազգային Պարարեւտի Եւ Պարագէտների Միութեան նախագահ եւ «Բերդ» պարային անսամբլի գլխատր պարուսոյց Կարէն Գեորգեանի դասախօսությամբ: Նոյն օրը, մասնակից խմբերից երեքի հետ մեկնեցին Լոռու մարզ: Սպիտակ քաղաքում նրանց դիմաւորեցին քաղաքապետ Գագիկ Սահակեանը եւ քաղաքապետարանի աշխատակազմը, այնուհետեւ այցելել են 1988 թականի երկրաշարժի զոհանների յիշատակին նիրաւ յուշահամալիր: Երեկոյեան ելոյթ ունեցան Վանաձորի Ծառ Ազնաւորի անան մշակոյթի պալատի դահլիճում: Ելոյթի աւարտին, Լոռու մարզպետի տեղակալ Արսէն Ղարիբեանը շնորհակալական խօսքերից յետոյ յանձնեց մարզպետի շնորհակալագիրը:



Յուլիս 5-ին մասնակցեցին Արագածոտնի մարզի Աշնակ գիւղի Ծիրանի այգում կազմակերպած բացօթեայ համերգ-տօնախմբութեանը, ուր ներկայ էր Սփիւքի նախարար Հրանուշ Յակոբեան: Այնտեղից մասնակից խմբերը տարազներով երթ կազմակերպեցին դէպի Հայ Ազատագրական Պայքարի մեծ նիրեալ Գեորգ Զաւուշի տուն-թանգարանը եւ ծաղկներ տեղադրեցին նրա գերեզմանին:

Յուլիսի 7-ին խումբն այցելեց Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Կէչառիս եկեղեցին եւ Օրբէ-

Շարունակութիւն՝ 23-րդ էջում

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՐ ԶՈՒՂՅՈՒՄ

Ուրբաթ՝ օգոստոսի 2-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորը նախաձեռնել էր աննախընթաց համերգային երեկոյ: Միաւորի երգիչ-ուհինների հետ աշխատելու համար հրաւիրել էր մայետրօ Արմէն Ամիրխանեանը, եւ որպէս այս նոր շրջանի առաջին համերգային ծրագիր, խումբը բեմ էլաւ աշուղական, ժողովրդական եւ հայրենասիրական երգերի կատարումներով:



աւարտը հանդիսացաւ Հայկազունի «Պիտի գնանք վաղ թէ ուշ» խմբերգը:



Համերգն առաւել տպաւորիչ դարձաւ Միաւորի «Կոունկ» պարխմբի մենակատար եւ խմբական պարերով, պարուսուց Նոնա Բախշեանի ղեկավարութեամբ, ինչպէս նաեւ «Կոունկ» ասմունքի խմբի անդամ Կարին Տէր-Մարտիրոսեանի հաճելի հանդիսավարութեամբ:

Համերգի յաջող ընթացքի համար մեծ դեր եւ նշանակութիւն ունեցաւ նաեւ երգերի նագների գործիքաւորումը, որը վստահել էր Բաֆֆի Շահբազեանին:

Համերգին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, արևեստի ասպարէզում աշխատողներ եւ հայկական ժողովրդական երգերը գնահատող հանդիսատեսներ:

Համերգն սկզբից իսկ խոր տպաւորութիւն թողեց՝ Արգին Չահարմահալիի միջոցով «Որպէս մի ծաղիկ» երգի կատարմամբ: Նոյն տրամադրութեամբ հանդիսատեսն ունկնդրեց մենակատարումներ՝ հայկական ժողովրդական եւ աշուղական երգերի շարանից մի ծաղկաբաղ, որոնք հերթաբար կատարեցին Շաքէ Մովսիսեանը, Լեիկ Խաչատրեանը, Չարեհնուշ Աղուրեանը, Ալիս Յովսէփեանը, Նայիրի Ղազարեանը եւ Անասիկ Յոսէփեանը: Ելոյթների



Հանդիսատեսի կողմից համերգն ընդունեց եւ գնահատեց բուն եւ երկարատեւ ծափահարութիւններով, իսկ եզրափակիչ խօսքում առաջնորդ Սրբազան Հայրը մեծ գնահատանքով խօսեց երեկոյի մասին՝ այն որակելով աշուղական, ժողովրդական ու հայրենասիրական

զուլայ, մաքուր եւ բարձր մակարդակով ներկայացուած երգեցողութիւն:



Գերշ. Սրբազան Հայրը նկատի ունենալով հանդիսատեսի, յատկապէս երիտասարդների քիչ թւով ներկայութիւնը, ասաց, որ նա յոյս ունէր սրահը յորդէր երիտասարդ-ուհիներով,

րով, քանզի «Նրանք պէտք ունեն նման ճաշակի: Ճի՛շտ է, կան ուրիշ երգեր. թո՛ղ յսեն, թո՛ղ սիրեն, բայց աշուղական, փողովորդական եւ հայրենասիրական մեր երգերը հայի հոգու եւ սրտի ճայնն ու ապրումներն են, որոնք փոխանցուում են իւրաքանչիւր հայի»: Սրբազան Հայրը յոյս յատնեց, որ նման ձեռնարկների կազմակերպումը լինեն յաճախակի եւ նշեց, որ իր ցանկութիւնն է Նոր Զուղայում դարձեալ ծնուն աշուղներ, ինչպէս եղել են անցեալում: Սրբազան Հայրը գնահատանքով անդրադառնալով կատարողներին եւ նրանց ներկայացումներին, եզրափակելով իր խօսքը, ասաց. «Եթէ մենք ունենք այսպիսի երիտասարդ-ուհիներ հայկական մաքուր ու զուլայ երգը կապրի առշաւէտ»:



Համերգի աւարտին Մշակութային Միաւորի Վարչութեան կողմից վարդեր նւիրեցին բոլոր մասնակիցներին եւ երգի ու պարի ղեկավարներին:



Շարունակութիւն՝ 10-րդ էջից

ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԳ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ... նմանների ճանապարհով կերտենք ազատ, անկախ եւ միացեալ հայրենիք»:

Որպէս այս սուրբ գաղափարին նւիրած խաղերի մեկնարկ, Քահանայ Հայրը, ներկաների հետ միասին, յոտնկայս Տէրունական Աղօթքով օրհնեց խաղերը եւ գնդակը յանձնեց «Արարատ» եւ «Ուսանողական» խմբերին, որով եւ սկսեց այս շրջանի խաղերը:



Հնգօրեայ տեսողութեամբ մրցաշարի եզրափակիչ փուլում մրցակցեցին «Փիւնիկ» եւ «Աղթամար» խմբերը: Արդիւնքում յաղթող ճանաչեց «Փիւնիկ» խումբը, որի անձնակազմին յանձնեց հինգ մարտիկների պատկերներով պատրաստուած յուշանւէրներ եւ գնահատագրեր, իսկ երկրորդ տեղը զբաղեցրած «Փիւնիկ» խմբի անդամներին եւ իրավարար կազմին հերթաբար յանձնեց գնահատագրեր եւ շնորհակալագրեր, որոնք յանձնեցին «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան եւ Միաւորի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչները եւ խաղերի ընդհանուր պատասխանատուն:

Կարեւոր է նշել, որ մրցավարութիւնը սիրալոյսով կերպով ստանձնել էին Վահիկ Թորոսեանը, Լեւոնը Բաղդասարեանը, Ռուբիկ Պարսամեանը եւ Ռազմիկ Նազարեանը, իսկ որպէս օգնական՝ համագործակցում էին մի շարք երիտասարդներ եւ պատանիներ:

ՆԵՒԵՑ՝ Ն.Ձ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻԱՌՈՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 35-ԱՄԵԱԿԸ

Նախաձեռնությամբ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Սկաուտական Միաորի Գերագույն Մարմնի և կազմակերպությամբ գործադիր յանձնախմբի, ուրբաթ՝ յուլիսի 27-ի երեկոյան, Միության սրահում մեծ հանդիսությամբ նշեց Միաորի հիմնադրման 35-ամեակը:

թեան Կենտրոնական Վարչությանը, որի անունից շնորհալուրանքի և բարեմաղթանքների խօսքերով հանդես եկա Նորիկ Պողոսեանը:



Ծրագրին հրավիրած և ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Միության Կենտրոնական Վարչության և միւս միաւորների վարչութիւններից ներկայացուցիչներ, Միության և Շահինշահրի Մասնաճիւղի Սկաուտական միաւորների բոլոր հատուածների սկաուտներն՝ իրենց պատասխանատուներով ու ծնողներով, ինչպէս նաեւ՝ բարեկամ սկաուտներ: Հիւրաբար ներկայ էին նաեւ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան Սկաուտական Միության Կրտսեր հատուածի պատասխանատուական կազմի անդամ Արգիւնէ Միրզախանեանը և Լիբանանի սկաուտական խմբաւետերից և կրտսերների պատասխանատու Յակոբ Գունանեանը:

Օրայ առթիւ պատրաստած կարկանդակը, ըստ աւանդոյթի, կտրեցին ամենաերէց և հիմնադիր անդամներից աւագ խմբաւետ Ռոբերտ Սիմոնեանը և ամենակրտսեր անդամներ Նարեկ Բարդեանը, Էրիկ Ղազարեանը և Յաւերժ Յակոբեանը:

Երեկոն առաւել աշխուժ ընթացք ընդունեց «Անի» նագախմբի և նրա երգեցիկ անդամների կենդանի կատարումներով, որին միացան ներկայներն իրենց պարով:

Ընթրիքի սեղանների շուրջ, որի սեղանապետն էր Զարեհ Ղարախանեանը, բաժակաճառեր եղան անցեալի բոլոր սկաուտների, մասնաւորաբար վերջերս կեանքից հեռացած Ժորժիկ Դաւթեանի յիշատակին, ով մեծ ներդրում է ունեցել Միաորի հիմնադրման աշխատանքներում:

Այնուհետեւ օրայ առթիւ հրաւիրեց և արտայայտեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Նուէլ Մինասեանը:

Երեկոյի ընթացքում ասմունքեցին Մեղրի Ղուկասեանն ու Վեհանուշ Խողաբախչեանը և երգեց Թանգիկ Միրզախանեանը:

Հանդիսութեան կազմակերպչական աշխատանքներում համագործակցել էր Միաորի Ծնողական Խորհուրդը:



Ողջոյնի և հանդիսութեան բացման խօսքով հանդես եկա Գերագույն Մարմնի նախագահ դեր-խմբաւետ Մանիա Ղուկասեանը, որը հետաքրքիր պատմական ակնարկով անդրադարձաւ սկաուտիզմի ապա հայ սկաուտութեան և հետագայում Նոր Զուղայում Իրանի առաջին սկաուտական խմբակի կազմաւորմանն ու հիմնադրմանը և Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության 35-ամեայ անցեալ ունեցող Սկաուտական Միաորի հինադրմանը, և խօսքը փոխանցեց Միու-

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՍԿԱՈՒՏԱՊԵՏ ԵՂԻԱ ՎԵԼԻՋԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



2012 թականին լրանում է Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Սկաուտական Միաւորի 35-ամեակը. այս առթիւ Միաւորի Գերագոյն Մարմնի նախաձեռնութեամբ, յուլիսի 6-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Նոր Զուղայի Հայոց Ազգ. Գերեզմանատանը կատարւեց Հոգեհանգստեան արարողութիւն՝ Իրանի առաջին սկաուտապետ Եղիա Վելիջանեանի յիշատակին:

Սկաուտական միաւորների ամբողջ կազմը՝ իրենց պատասխանատուերով ու ծնողներով եւ յայտարարութեանն ընդառաջած համայնքի անդամներ:

Սրբազան Հայրն իր քարոզի մէջ սկաուտներին յորդորեց՝ «Բարձրացիր, բարձրացրո՛ւ» հայ սկաուտիզմի նշանաբանով առաջնորդւել եւ միշտ ձգտել հասնել լաւագոյնին ու ծառայել սկաուտիզմի վերնապատակներին:



Արարողութիւնը կատարեց Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, մասնակցութեամբ արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանի:

Սկաուտապետի ու նրա դստեր շիրիմի մօտ ներկայ էին Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչները, Միութեան եւ Շահինշահի Մասնաճիւղի



Այս առթիւ ելոյթ ունեցաւ Միաւորի Գերագոյն Մարմնի նախագահ Մանիա Ղուկասեանը, որն անդրադարձաւ մեծ սկաուտապետի եւ նրա դստեր կենսագականներին ու սկաուտական, ուսուցչական եւ արւեստի ասպարէզներում նրանց մատուցած ծառայութիւններին, որոնցով նրանք անմոռանալի անուն են թողել Իրանի եւ իրանահայութեան յիշողութեան մէջ:

Այսպիսով համախմբւած սկաուտները յարգեցին իրենց մեծ ընկերներին, ովքեր իրենց մատուցած ծառայութիւններով մեծ պարծանք են բերել մեզ՝ իրանահայերիս:

Ի ՕՕՕԻ՞՞ Պ ԱԾ Ս.ա. ԾՉ ՍàòԾՕ՞՞ ò ' ը ծՕ՞՞ Պ àòԻ ըԻ ըՍ ÀՍԻ օծàòÃ օ՞՞ Ս Պ àòԻ àòՍ¼àòÃÆòՍÆò



Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերությունը հիմնել է 1892 թականին, Ն.Զ. «Ս. Կատարիեան» օրիորդաց դպրոցի ուսուցիչ Յովսէփ Բարսեղեանի միջոցով եւ անդամակցութեամբ նոյն դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիների: Ընկերութեան նպատակն է եղել իր բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ սատար հանդիսանալ կարիքաւոր աշակերտներին՝ նրանց համար հագուստներ եւ գրեմական պիտոյքներ հայթայթելով: Հետագային ընդարձակելով իր օժանդակութիւնը՝ օգնութեան է հասնում բոլոր կարիքաւոր ընտանիքներին:

Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնն իր գործունէութեան վերջի տարիներին, անդամուհիների շնորհիւ ատելի աշխոյժ եւ ակտիւ մասնակցութիւն ունի համայնքում, եւ կատարում է արժանի աշխատանքներ: Աշխատանքներն ատելի բարելատելու համար, անդամուհիները բաժանած են տարբեր յանձնախմբերի, որոնք են գրական, աշխատանքային, բարեգարդման, կոկտեյլի, եւ Ընկերութեանս խանութի յանձնախմբերը:

Ընկերութիւնս տարւայ ընթացքում

ունի անցեալից աւանդոյթ մնացած որոշ աշխատանքներ, որոնցից է՝ Քառասուն Մանկանց եւ Կոյս Հոիփսիմէի տօներին Ս. Պատարագից յետոյ, արարողութեանը մասնակցողներին հիւրասիրել Ընկերութեան յարկի տակ:

Ընկերութեան գրական խմբակի միջոցով ամէն ընդհանուր ժողովներում տարբեր գիտելիքներ է փոխանցում անդամուհիներին: Տօնելով մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակի մահուան 40-ամեակը վառ է պահել նրա յիշատակը:

Տարեկան աշխատանքներ * Վաճառք

Ամէն տարի ամուսն վերջի ամսան, Ս.Ա. Վանքի ցուցասրահում կազմակերպւում է վաճառք-ցուցահանդէս, որում համայնքի արեւտասէր կանանց ձեռքի աշխատանքները եւ գործածքները վաճառքի են դրում եւ այցելուների կողմից գնահատանքի արժանանում:



Ամէն տարի Ընկերութիւնը մասնակցում է Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արատ» Միութեան կողմից կազմակերպած Ամանորեայ վաճառքին:

*** Նպաստներ**

Ընկերությունն օգնում է համայնքիս կարիքաւոր ընտանիքներին եւ ունի թէ ամսական եւ թէ տարեկան նպաստաւուներ: Ամէն տարի Ս. ԾՆՆդեան եւ Ս. Յարութեան տօներին ուսեստեղէնով օգնում է նպաստաւուներին, օգնում է նաեւ բուժման կարիք ունեցող անձանց: Հոգ է տարւում նոցիսկ կարիքաւոր ընտանիքների երեխաների գրեական պիտոյքների հայթայթումով:

*** Դասարաններ**

Երկար տարիներից ի վեր ընկերությունն զբաղւել է համայնքիս տարբեր տարիքի անդամների համար զանազան դասարաններ կազմակերպելով, որ շարունակում է մինչ այժմ:

Ընկերութեանն ներկայի դասարաններն են՝ համակարգչի, թիւածքի, դեսերտի, անգլերէն լեզւի, հելունագործութեան, ճաղագործութեան, ասեղնագործութեան սուսուցման եւ մանկական դասարաններ եւ խոկում (մեղիթէլջն):

*** Տօնակատարութիւններ**

Ընկերությունն տօնում է ազգային եւ կրօնական տարբեր տօներ՝ ներքին եւ համայնքային մասշտապներով, օրինակ՝ Ս. Սարգիս Զօրավարի նախատօնակը՝ համայնքային մակարդակով, որտեղ լինում են փոխանցումներ Ս. Սարգիս Զօրավարի մասին, գեղարւեստական բաժին, ուրախ ժամանց եւ վերջում ներկաներին բաժանում է աւանդական աղի բլիթ:

Ընկերութեան յարկի տակ ամէն տարի անդամուհիների համար տօնւում են Ամանորը, Ս. Ծնունդը, Բուն Բարեկենդանը եւ Ս. Յարութեան Տօնը՝ Զատիկը:

Հայ մօր դերը բարձր գնահատելով, ամէն տարի մեծ շուքով տօնւում է «Մայրերի Օր»-ը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում եւ համայնքիս անդամների ներկայութեամբ:

Երկար տարիներ է որպէս հայ ժողովրդին ծառայող, Ընկերութեան ուշադրութեան եւ մտահոգութեան կենտրոնում է նաեւ Զաւախքը եւ ջաւախքահայութիւնը. այդ պատճառով, սկսած 2002 թւականից, տարին մէկ

անգամ կազմակերպւում է դաշտահանդէս՝ նւիրած Զաւախքին:



Ամէն տարի Ընկերութիւնը մասնակցում է «Թելեթօն»-ին եւ կատարում նւիրատութիւն: Տարեկան նւիրատութիւն է կատարւում Հայ Դատին:

Վարչութեան եւ խանութի յանձնախմբի ջանքերով կատարւում է Ընկերութեանն սեփական խանութը, որտեղ վաճառւում են ձեռագործներ: Աշխատանքային խմբակի ջանքերով պատրաստւում են տարբեր ձեռագործներ կամ գնւում եւ վաճառւում են խանութում:



Վոկտելի խմբի ջանքերով պատրաստւում է տարբեր հւիրասիրութիւնների ուսեստեղէնը:

Ընկերութեանն բարեգարդման խումբը հոգ է տանւում Ընկերութեան կենտրոնատեղիի գեղեցկութեան եւ դասաւորման մասին:

2011 թւականի հոկտեմբեր ամսից հիմբ է դրւել Ընկերութեանն «Փարոս» ասմունքի խումբը, համագործակցութեամբ դոկտ. Սիլւա Ալլահվերդեանի: «Փարոս» խումբը համագործակցել է 2012 թւականի ապրիլեան յանձնախմբի հետ:

Շարունակութիւն՝ յաջորդ էջում

Ն.Ջ. ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՋԱԽՍԻՔԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՉԵՌՆԱՐԿՆԵՐ

Ն.Ջ. Հայունեաց Բարեգործական Ընկերությունը իր հայրենանպաստ աշխատանքների շարանում 10 տարի անընդմեջ կազմակերպել է Ջախսիքին նկիրված դաշտահանդեսներ:



Սկսեալ 2002 թականից ցայսօր, իրաքանչիւր տարի Նոր Զուղայի Հայունեաց Բարեգործական Ընկերությունը կազմակերպում է դաշտահանդես՝ նկիրված Ջախսիքին եւ ջալախքահայութեանը: Այս տարի եւս, աւանդոյթի համաձայն, յունիսի 22-ի երեկոյեան, «Արարատ» Միութեան բացօդեայ տարածքում ջերմ մթնոլորտի ներքոյ կազմակերպեց ամենամեայ դաշտահանդեսը, որի հասոյթը, ինչպէս նախորդ տարիները, յատկացելու է Ջալախքին օժանդակելու գործին:



Խաղեր եւ անակնկալներ էին նախատեսել բոլորի, մասնատրաբար մանուկ-պատանիների համար:

Ներկաներն առիթ ունեցան ճաշակելու Ընկերութեան շնորհալի անդամների միջոցով պատրաստուած անուշաբոյր աւանդական ճաշատեսակներ:



Մեծ հետաքրքրութիւն առաջացրին Ջալախքին առնչուող նիւթերի ընթերցումները Բարեգործական Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիների միջոցով: Իսկ սեղանների վրայ տեղադրուած «Ջալախքը իմ հայրենիքն է» խորագրով գրութիւններով ներկայ ժողովուրդն իրազեկ պահեց Ջալախք եւ ջալախքահայութեան ներկայ իրավիճակի մասին:



Շրջափակում տեղադրուած կրպակների շարանում ուշագրաւ էր նաեւ նկիրահաւաքի կրպակը, որտեղ հաւաքագրում էին նկիրատուների նիւթական օժանդակութիւնները:



Շարունակութիւն՝ նախորդ էջից
i օօօi ²¶ Էծ Ը.æ. Ծ² ԸàծԾօ² ծ ¹ ² ծօ¶ àծi ²i ² Ը...
Անդամուհիների տրամադրութիւնը բարձրացնելու նպատակով կազմակերպուած են ճամբորդութիւններ դէպի տարբեր միջավայրեր:
Ընկերութիւնը համագործակցում է միութիւնների եւ յանձնախմբերի հետ: Համագործակցութիւն է ցուցաբերել Շահինշահի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանին՝ Շահինշահի առաքելով Ընկերութեանս ձեռագործի դասատուին, այնտեղ կազմակերպուած ուսուցողական դասընթացների համար:
Ընկերութիւնս իր հիմնադրման 120-ամեակի տօնակատարութեան ծրագրերի կազմակերպման համար իր անդամուհիներից կեանքի է կոչել յրբեւեանի տօնակատարութեան յանձնախումբ:

ՀԱՅ ԳՐՔԻ ՏԱՐԻԱՆ ՆԻՐԻԱՅ ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ-ՎԱՃԱՌՔ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՇԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱՍԱԶԵՆՈՒԹԵԱՐ

Ս. Ամենափրկչեան Վանքի ցուցասրահում կազմակերպել էր գրքի ցուցահանդէս-վաճառք՝ նւիրած Հայ Գրքի տարւան, ուր ցուցադրել էին հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներով հոգետոր, պատմական, հոգեբանական, գիտական, մանկական, ձեռարւեստի, խոհարարական եւ առողջապահական գրքեր եւ պատմածքներ, բառարաններ ու պատմավէպեր:



Նոր Զուղայի Հայունեաց Բարեգործական Ընկերութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած այս ցուցահանդէսի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ յուլիսի 3-ի առաւօտեան, ներկայութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, Հայունեաց Բարեգործական Ընկերութեան անդամուհիների եւ ընթերցասէր անհատների:



Նախ Ընկերութեան անդամուհի տկն. Մանուշ Պօղոսեանը հանդէս եկաւ ողջոյնի եւ բարիգալըստեան խօսքով, որից յետոյ անդրադառնալով Հայ Գրքի տարւայ զուգադիպմանը հայկական տպագրութեան 500-ամեակին եւ ԻԻՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հրոչակելու հետ, այսպէս անելացրեց. «Հայ ընտանիքի պարտականութիւններից է, որ կարենորելով մայրե-

նի լեզուն՝ ընթերցի ու պահպանի հայ գիրքը եւ այդպիսով՝ իր գաւակներին ուղեկցի դէպի փայլուն եւ լուսաւոր ապագայ»:



Այնուհետեւ առաջնորդ Սրբազան Հայրը նույնպէս անդրադառնալով Հայ Գրքի տարւան եւ հայկական տպագրութեան 500-ամեակին, սոյն ցուցահանդէսի կազմակերպումը գեղեցիկ երեսոյթ համարեց եւ ասաց. «Պէտք է բազմապատկի նման ծրագրերի կազմակերպումը, որպէսզի կարողանանք մեր նոր սերնդին քաջալերել, որ աւելի մօտենայ ու բարեկամանայ հայ գրքին եւ հայ գիրքը կարդալով՝ զարգանայ, հարստանայ ու նրան փոխանցելի մեր մտաւորականիների եւ գրողների շունչն ու ոգին»:



Սրբազան Հայրը կտրեց մուտքի ժապաւէնը եւ ներկաները մուտք գործելով ցուցասրահ՝ առիթ ունեցան մօտիկից դիտելու ըստ նիւթերի դասաւորուած բազմատեսակ եւ բովանդակալից գրքերը: Հանդիսութիւնն ասարուեց ընդունելութեամբ:

ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ «ԷՐԵՐՈՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

2012 թականի յուլիսի 4-ին, Փերիոյ Կրթասիրաց Միութեան «Էրերունի» պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց Ալինա Գրիգորեանի, մեկնեց Գերմանիա՝ մասնակցելու Ֆրայբուրգ քաղաքում կայանալիք միջ-մշակութային փառատօնին, որը կազմակերպել էր նշած քաղաքի քաղաքապետարանի միջոցով: Փառատօնին մասնակցել էին նաեւ Ֆրայբուրգի քոյր քաղաքները, որոնց շարքում կարելի է թարկել Իտալիայի Պադովա եւ Իսպանիայի Գրանադա քաղաքները՝ պարի, երգի եւ երաժշտութեան գեղարուեստական խմբերով: Ֆրայբուրգում կազմակերպուած փառատօնը նույնութեամբ տեղի ունեցաւ նաեւ Իտալիայի Փադովայում:



Պարախմբին ուղեկցում էին՝ պարուսոյցն ու Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտ. Վարչութեան անդամ տկն. Վարդուհի Յովսէփեանը, իսկ որպէս խմբի կատարողներ պատիրակութեան մաս էին կազմում Թենի Համազասպեանը, Նայիրի Դաւթեանը, Մարալ Ղարիբեանը, Միգանուշ Կարապետեանը, Վանիա Մերոպեանը, Մանիա Գալստեանը, Ռամելա Ղարախանեանը եւ Մելանիա Ծատուրեանը:



Գերմանիա մեկնելու նախորդ օրը՝ յուլիսի 3-ի առաւօտեան, պատիրակութիւնը Ս. Ամենափրկչեան Վանքի Ծաղկեայ դահլիճում

հանդիպում ունեցաւ Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի հետ եւ ստացաւ Սրբազան Հօր հայրական օրհնանքը: Հանդիպմանը ներկայ էին նաեւ՝ Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանն ու Փերիոյ Կրթ. Միութեան Կենտ. Վարչութեան անդամները:

Պարախումբը Ֆրայբուրգ եւ Պադովա քաղաքներում ելոյթ է ունեցել «Եաման եար», «Նազով նազ անի», «Իմ Հայաստան», «Երագ», «Ուզում դարա», «Վաղարշապատ», «Ով հայոց աշխարհ» եւ «Միասնութեան շուրջպար» պարերով: Իսկ նշած քաղաքների կենտրոնական սրահներում տեղի ունեցած ելոյթներից բացի, «Էրերունի» պարախմբին առիթ ընձեռուեց իր պարարուեստը ցուցադրելու Ֆրայբուրգի եկեղեցիներից մէկում եւ Մանկավարժական համալսարանի սրահում:

Հարկ է նշել, որ խմբերի կողմից նախատեսուած պարային կատարումներից բացի, կազմակերպիչների միջոցով նկատի էին առնել երաժշտութիւններ, որոնց ներքոյ մասնակիցները պէտք է կատարէին պարային համահունչ շարժումներ: Անակրնկալ երաժշտութիւնների մասին մասնակիցներն իրազեկ պահեցին Գերմանիայում՝ փորձի համար միայն երեք օր ժամանակ ունենալով. «Էրերունի» պարախումբը չորս կարճատեւ փորձերից յետոյ, յաջողեց իրեն լաւագոյնս դրսեւորել նաեւ այս բաժնում:

Պարախմբի բոլոր ելոյթները խանդավառութիւն պատճառեցին հանդիսատեսին եւ արժանացան բարձր գնահատանքի, ինչն արտացոլեց նաեւ Գերմանիայի Badische Zeitung թերթի 10 յուլիսի համարում:

Պատիրակութիւնը Գերմանիա եւ Իտալիա եղած ժամանակահատուածում կատարել է մի շարք այցելութիւններ եւ շրջագայութիւններ: Այցելութիւնների շարանում տեղի է ունեցել հիւրընկալութիւն Ֆրայբուրգի քաղաքապետարանի յարկի ներքոյ, որտեղ

Շարունակութիւն՝ 23-րդ էջում

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

2012 թվականի յուլիսի 19-ին, Փերիոյ Կրթասիրաց Միութեան կենտրոնատեղիում տեղի ունեցաւ Միութեան Կենտրոնական Վարչութեան 26-րդ ընտրական Ընդհանուր Ժողովը:

Դիւանի հրաւերով, յուլիսի 24-ին կայացաւ քւէարկութիւն, արդիւնքում ընտրուեց նոր վարչութիւն ըստ հետեւեալի.

- Հայկ Հայրապետեան՝ նախագահ
- Սիրան Ալումեան՝ փոխ-նախագահ
- Ռիմա Զաքէոսեան՝ Ա քարտուղար
- Վարդուհի Ք. Օհանեան՝ Բ քարտուղար
- Վահան Թահմազեան՝ հաշւապահ
- Արա Սարգսեան՝ գանձապահ
- Վարդգէս Դուկասեան՝ գոյքապահ:

- Հաշիւքննիչ Մարմին
- Սարո Դիլանչեան
- Ռիմա Սարգսեան
- Վարուժ Նաւասարդեան:

*Փերիոյ Կրթասիրաց Միութեան
Կենտրոնական Վարչութիւն*

ՇԱՀԻՆՇԱՀՐԻՄ ԿԵԱՆՔԻ ԿՈՉԷՇ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւնը, երիտասարդութեան աօրեան կազմակերպ, նպատակաւազ եւ աշխոյժ դարձնելու նպատակով կեանքի կոչեց Երիտասարդական Խորհուրդ: 2012 թվականիս յուլիսի 22-ին տեղի ունեցաւ Երիտասարդական Խորհրդի դիւանի ընտրութիւնը հետեւեալ կարգով.

Նինարէ Թահմազեան՝ նախագահ, Նժդիկ Թորոսեան՝ փոխ-նախագահ, Անի Մինասքանեան՝ քարտուղար, Արփի Թահմազեան՝ քարտուղար, Սերինէ Աղախանեան՝ գանձապահ, Վահէ Թահմազեան՝ հաշւապահ, Էդիկ Խաչիկեան՝ խորհրդատու:

Դիւանի ընտրութիւնից յետոյ, Երիտասարդական Խորհուրդն անմիջապէս անցաւ աշխատանքի: Նախ մրցոյթ յայտարարեց Խորհրդի խորհրդանշի համար: Ընտրուեց լաւագոյնը, որն էլ հաստատուեց Համայնքին Վարչութեան կողմից:

Որպէսզի աշխատանքային ծրագիրը համահունչ լինի ժամանակակից երիտասարդութեան նախասիրութիւններին եւ պահանջներին, Երիտասարդական Խորհուրդը կարողացաւ երիտասարդութեան մէջ կատարած հարցախոյզների միջոցով եւ ստացած առաջարկների հիման վրայ կողմնորոշել եւ աշխատանքային ծրագիր մշակել, որի մէջ լինելու են գեղարւեստական, մարզական, յրբէլեանական ձեռնարկներ, սեմինարներ, արշաւներ, բանակումներ եւ դաշտահանդէսներ:

Խորհուրդն իր աշխատանքային գործունէութիւնն սկսեց դաշտահանդէսով, որը տեղի ունեցաւ օգոստոսի 9-ին հայոց դպրոցի շրջափակում, որը կազմակերպել էր համայնքի բոլոր անդամների համար. ծրագիրը մեծ ընդառաջում գտաւ համայնքի անդամների կողմից: Ելնելով համայնքի անդամների ցանկութիւններից, Երիտասարդական Խորհուրդը խոստացաւ ամէն հինգշաբթի օր կազմակերպել նմանատիպ դաշտահանդէսներ:

Յոյս ունենք, որ Երիտասարդական Խորհրդի գործունէութիւնը կը լինի բեղմնաւոր եւ նպատակաւազ:

*Շահինշահրի Հայ Համայնքի
Վարչութիւն*

ԱՐԿԱՐԿԱԿԱՆ-ՔՐԸԺԵՇՏԻ ԵՐԷԿՈՅ ԾԱԿՆԵԾԱՔՐՈՒՄ



Յունիսի 14-ի երեկոյեան, Ծափնշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ ուղեցոյց օղակի 3-րդ դասարանի աւարտական հանդէսը, որը կազմակերպուել էր ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի համագործակցութեամբ: Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Ս. Բաբգէն եպս. Չարեանը, Ծափնշահրի հգետր հովիւ հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Ս. Վարդան քինյ. Աղաբաբայեանը, Թեմական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, Համայնքին Վարչութեան անդամները, աշակերտների ծնողներն ու հարազատները:

ցին ուսուցիչ-ուսիների՝ նկիրելով ծաղիկներ եւ նրանցից ստանալով յուշանւէրներ ու բարի մաղթանքներ:



Ծրագրի յետաքրքիր բաժինը այն տեսանիւթի ցուցադրումն էր, որը շարանն էր շրջանաւարտների մանկապարտէզից սկսած մինչեւ հայոց դպրոցում իրենց անցկացրած վերջին օրերի լուսանկարների: Այնուհետեւ բեմ հրաւերուեցին թեմական առաջնորդը, Կրթական եւ Թեմական խորհուրդների ներկայացուցիչները՝ յանձնելու շրջանաւարտների վկայագրերը:



Միշտ էլ հրաժեշտի պահը յուզիչ է: Դա երեւում էր եւ աշակերտների եւ ուսուցիչների աչքերում: Նըրանք հրաժեշտ էին տալիս իրենց հարազատ հայոց դպրոցին, որտեղ 8 տարի սովորել էին եւ ապրել, ունեցել էին բազում ուրախ եւ լաւ օրեր ու տարիներ:

Վերջում իր հայրական պատգամը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը, ասելով. «Շատ գեղեցիկ էր երեկոն: Ուրախ եւ հպարտ ենք մեր աշակերտներով: Յուզիչ էին նրանց խօսքերը, երախտագիտական զգացումներն իրենց ուսուցիչ-ուսիներին հանդէպ: Իմ գնահատանքի խօսքն եմ ուղղում Կրթական Խորհրդին, ուսուցիչներին, Ծնողական Խորհրդին, ծնողներին եւ իհարկէ մեր շրջանաւարտներին. այսօր դուք աւատում էք այս դպրոցը եւ տակաւին ուսման մէջ շատ ճանապարհ ունէք անցնելու: Իմ պատգամը ձեզ այս է թէ՛ ինչ էլ որ դառնաք, որտեղ էլ լինենք, ծառայեցէ՛ք մեր եկեղեցուն, մեր ազգին եւ մեր հայրենիքին»:

Աշակերտներն իրենց հրաժեշտի խօսքերն արտայայտեցին երգերով եւ ասմունքներով, գալիք ուսումնական տարւայ առաջին դասարանցիներին նկիրեցին գիտութեան բանալին, յուշելով, որ այն կը փայլի միայն իրենց լաւ սովորելու շնորհիւ, եւ շնորհակալական ու երախտագիտութեան խօսքեր ուղղե-

ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ԿԱՆԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆԻ ՆՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ



Յունիսի 13-ին Շահինշահրի հոգետոր հովի հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի հսկողութեամբ եւ կազմակերպութեամբ, եւ Համայնքին Վարչութեան համագործակցութեամբ, Շահինշահրի «Սուրբ Կուսանաց» հոգետոր լսարանի մասնակիցների համար կազմակերպել էր արշաւ, որին մասնակցում էին նաեւ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը,

Վարչութեան անդամները, հայոց դպրոցի ուսուցչական կազմը, Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամուհիները, որոնց մեծ մասը մասնակցութիւն էր ունեցել լսարանի դասընթացներին:

Արշաւի մասնակիցներն ունեցան ուրախ եւ հաճելի պահեր բնութեան գրկում, իսկ Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամուհիների միջոցով կազմակերպւած խաղերն ու մրցոյթներն աւելի ջերմ ու մտերիմ դարձրեցին մթնոլորտը: Նաեւ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը լսարանում արժաւած թեմաների շուրջ պատրաստել էր հարցեր:

Մրցոյթների յաղթողները պարգեւատրուեցին գանգաւան նւերներով:

Ամբողջ օրուայ ընթացքում հայկական երգերի եւ երաժշտութեան ներքոյ բոլորը հաճելի պահեր եւ ուրախ տրամադրութիւն ունեցան եւ երեկոյեան վերադարձան քաղցր յուշերով:



Շարունակութիւն՝ 11-րդ էջից

«ԿՈՒՆԿ» ՊԱՐԱՆԿՈՒԿԱԸ ՄԵՃ ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ... լեան եղբայրների տուն թանգարան: Այնուհետեւ ելոյթ ունեցան Հրազդան քաղաքի կենտրոնական հրապարակում կազմակերպւած բացօթեայ համերգին:



«Կուունկ» պարախմբի ելոյթների ծրագրերի մէջ էր ներառւած նաեւ յուլիսի 8-ին Արարատի մարզում համերգ եւ յուլիսի 10-ին փառատօնի փակման հանդիսութեան մասնակցութիւնը, սակայն ըստ ճշտւած ժամկետի խումբը Նոր Զուղա վերադարձաւ յուլիսի 9-ին:

Պատուիրակութեան Հայաստան եղած ժամանակ, Հայաստանի Հ1 հեռուստաընկերութիւնը հարցազրոյց է կազմել խմբի պատասխանատուների հետ:

Շարունակութիւն՝ 20-րդ էջից

ՓԵՐԻՈՑ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ...

արժանանալով քաղաքապետի եւ մի շարք բարձրաստիճան պաշտօնեաների ջերմ ընդունելութեանը, խումբը ներկաներին է ծանօթացրել հայ մշակոյթը եւ հրամցրել հայկական աւանդական քաղցրաւենիքներ:



Պատուիրակութեան պատուաբեր վերադարձը տեղի ունեցաւ յուլիսի 15-ին, միութեան անդամների, ծնողների եւ հարազատների խանդավառ դիմաւորմամբ:

Յաջողութիւն մաղթելով Նոր Զուղայի Փերիոյ Կրթասիրաց Միութեան «Էրեբունի» պարախմբին, ցանկանում ենք, որ ձեռքբերւած փորձառութիւնները, տպաւորութիւններն ու ապրումները խթան հանդիսանան նորանոր նւաճումների համար:

ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԼՁ - ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՐԱՍՄԵՆԱԿԻ ՏԵՂԵՆԱԳԻՐ

* Մայրերի Տօն

Ապրիլի 4-ի առաւօտեան ժամը 10-ին, Շահինշահրի «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանում տեղի ունեցաւ «Մայրերի օրուայ» հանդէս: Ներկայ էին Համայնքի հոգեւոր հովիւ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, բարձ. Ռազմիկ սրկ. Գալստանեանը, Մանկապարտէզ-Նախակրթարանի սաների մայրիկներն ու տատիկները:

Տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի անունից բարի գալուստ մաղթեց ներկաներին եւ շնորհաւորեց բոլոր մայրիկներին եւ տատիկներին՝ գեղեցիկ տօնի առիթով: Նա ներկայացրեց օրուայ ծրագիրը, որը բաղկացած էր 3 բաժնից՝ բանախօսութիւն, դպրոցի սաների ելոյթը եւ հիւրասիրութիւն:



Օրուայ բանախօս հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը բարի աւաւտ մաղթելով բոլորին, շնորհաւորեց տօնի առիթով: Նա գնահատեց «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի ուսուցչական կազմին եւ Ծնողական Խորհրդին, որ նշում են բոլոր առիթներն ու տօները, մանաւանդ՝ մայրերի տօնը, նշելով. «Երեխաները պէտք է գնահատեն իրենց մայրերին եւ պէտք է իմանան, որ կայ Մայրերի Տօն: Միշտ բանախօսի համար խորհրդածուծեան ամենադժուար նիւթը մայրն է: Շատ բաւուր կարելի է ասել մայրերի մասին, սակայն դրանք չեն կարող ամբողջո-

վին ներկայացնել մօր արժէքը, քանզի այնքան մեծ եւ այնքան լաւ բաւ չկայ, որ կարողանայ բնուծագրել մօր առաքելութիւնը եւ մօր նկարագիրը: Մայրը, այս աշխարհում, ամէն բաներից եւ ամէն ինչից վեր է, եւ դա է պատճառը, որ ամէն ինչի բարձրը եւ մեծը կոչուում է «Մայր» անունով, օրինակ՝ Մայր Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ այլն: Բայց աշխարհում բոլոր ազգերի մայրերից տարբերում է հայ մայրը, ինչպէս բանաստեղծն է ասում.-



*Մեր յոյսի դուռն է մայրս,
մեր տան մատուռն է մայրս,
մեր տան ճրագն է մայրս,
մեր արեգակն է մայրս:*

Եւ ամենակարեւորը մեր կեանքում՝ մեր մայրերի աղօթքն է. առանց նրանց բարի մաղթանքների եւ օրհնանքների մեր կեանքը հնարաւոր չէ: Ուստի մաղթում եմ ձեր բոլորին երկար տարիներ առողջ եւ ուրախ կեանք եւ համբերութիւն»:



Ծրագրի երկրորդ բաժնում դպրոցի սաներն իրենց երգերով եւ արտասանութիւններով շնորհաւորեցին իրենց մայրերին եւ տատիկներին: Ինչպէս նաեւ նկրեցին իրենց ձեռքով պատրաստած գեղեցիկ աշխատանքները: Իսկ վերջում բոլոր ներկաները հիւրասիրեցին

Ծնողական Խորհրդի կողմից:

*** Գրքի ցուցահանդես-վաճառք**

Երեքշաբթի՝ ապրիլի 10-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Ծափնշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սրահում տեղի ունեցաւ գրքի ցուցահանդես-վաճառքի բացում: Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա Կաթողիկոսը 2012 թականը հռչակել է «Հայ Գրքի» տարի եւ այդ առիթով Ծափնշահրի «Նարեկ» Մանկապարտէզ - Նախակրթարանի տեսչութիւնը, ուսուցչական կազմը եւ Ծնողական Խորհուրդը կազմակերպել էին յիշեալ ցուցահանդես-վաճառքը:



Բացումը կատարեց համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի եւ դպրոցի սաների միջոցով: Բացմանը ներկայ էին Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչը եւ սաների ծնողները: Ցուցահանդեսում ներկայացուած էին տարբեր տարիքի երեխաների համար պատմածքների, հեքիաթների, կրօնական եւ ընդհանուր գիտելիքների գրքեր: Բացման ծրագրից յետոյ, հոգշ. Հայր Սուրբի միջոցով տեղի ունեցաւ քրիստոնէական դաստիարակութեան լսարան, որի ընթացքում ներկայները տարբեր հարցերով դիմեցին նրան եւ ստացան համապատասխան եւ բաւարար պատասխաններ:

*** Ամաւերջի հանդես**

Մայիսի 30-ի ժամը 7:30-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ Ծափնշահրի «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի ամաւերջի հանդէսը, որին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծափնշահրի հոգե-

ւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ, հիւրեր, սաների ծնողներն ու հարազատները:



Ծրագրի բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի սկն. Ալիս Մկրտչեանը: Նա իր խօսքում նշեց. «*Այսօր հնչում է 2011-2012 ուսումնական տարւայ վերջին զանգը: Ամենաուրախ եւ սպասածօրն է երեխաների համար, նրանք անցնող տարւայ ընթացքում խաղացել են եւ զլարճացել: Բայց խաղերի կողքին սովորել են բազմաթիւ երգեր եւ արտասանութիւններ, թատրոն, պատրաստել են բազմաթիւ ձեռքի աշխատանքներ եւ իհարկէ՝ սովորել են ոսկետառ Այբուբենը: Նրանց միջոցով այսօր կը բեմադրւի Յովհաննէս Թումանեանի «Պոչատ աղէսը» հեքիաթը, որը նրանց առաջին քայլերն են թատրոնի աշխարհում: Ուրախ եւ յաճելի երեկոյ ենք մաղթում ձեզ»:*

Բացւեց բեմի վարագոյրը, միանգամից ներկայներին տանելով հեքիաթային գունազարդ ծառ ու ծաղիկներով լի գեղեցիկ մի աշխարհ: Երեխաներն իրենց դերին համապատասխան հագուստներով դարձել էին մի-մի դերասաններ: Խաղում էին ժպիտ եւ հիացմունք պարգեւելով ներկայներին:



Ծրագրի երկրորդ բաժնում, մանուկները հանդէս եկան գեղեցիկ խմբերգերով, իսկ վերջում առաջնորդ Սրբազան Հօր եւ Կրթական ու Թեմական խորհուրդների ներկայացուցիչների ձեռքով նրանց յանձնուեցին իրենց վկայականները:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր հայրական խօսքը փոխանցեց, ասելով. «*Մեզ համար մեծ ուրախութիւն է այսօր ականատես*

Շարունակութիւն՝ 28-րդ էջում

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՐՁԻՉ, ԻՐԱՆԻ ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ԱՆԴԱՄ ԵՒ ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱՐԱՐ ՕՇԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Օշին Տեր-Գրիգորեանը ծնել է 1981 թականի հոկտեմբերի 14-ին, Նոր Զուղայում: Տարրական կրթութիւնն ստացել է Նոր Զուղայի Հայոց Ազգային «Արմէն» դպրոցում, ապա ուսումը շարունակել է պետական դպրոցներում: Երկու տարի սովորելով «Նաչաֆաբադ»-ի Ազատ համալսարանի մեթալոքի ճիւղում՝ 2004 թականին ստացել է գերդիպլոմ:



Օշինն իր մարզական գործունէութիւնն սկսել է մանուկ հասակից: Եօթ տարեկանից զբաղւել է լողի մասնագիտական մարզումներով մինչեւ 16 տարեկան: Դրան զուգահեռ զբաղւել է նաեւ ֆուտբոլով: 8 տարեկանում Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան լողի խմբի հետ մասնակցելով Թեհրանի Համահայկական խաղերին շահել է ոսկէ մեդալ եւ արժանացել սոյն խաղերի ամենակրտսեր ոսկէ մեդալակիր մարզիկի կոչմանը: Այնուհետեւ ձեռք բերելով բազմաթիւ յաջողութիւններ, 16 տարեկանում, երբ անդամակցում էր Սպահան նահանգի լողի հաւաքականին, թողել է լողը եւ զբաղւել այլ մարզաձեւերով: Շուրջ վեց տարի (2000-2006) անդամակցելով Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան թեթեւատլետի գնդի հրում խմբին՝ անգամներ ստացել է ոսկէ մեդալներ Համահայկական եւ Գարնանային խաղերում:

Իր մարզական բազմաթիւ յաջողութիւնների շնորհիւ՝ Օշինը 2008 թականին, եղել է 20-րդ Գարնանային խաղերի ջահակիր խմբի կազմում: Նա յաջողակ մարզիկ լինելուց բացի, տարբեր մրցոյթներում աչքի է ընկել նաեւ մարզիկին յարիր վարքով եւ 2007 թականին հանդիսացել է ամենարժանաւոր մարզիկի կոչմանը, որը հպարտանալու առիթ է նաեւ իրանահայութեան համար:

Աւարտելով միջնակարգ դպրոցը, լրջօրէն զբաղւել է մարմնամարզութեամբ, անւանի մարզիչ հանգուցեալ Հրաչ Խոջեմալի մարզասրահում, որտեղ ծանօթացել է բազկամարտ մարզաձեւին: Անցկացնելով մարմնամարզութեան մարզիչի դասընթացները, որը կազմակրպւել էին Օլիմպիական եւ Պարաօլիմպիական Ազգային Ակադեմիայի միջոցով, յաջողել է այն ւարտել շատ լաւ գնահատականով եւ ստանալ մարզիչի արտօնագիր:

Հանգուցեալ Հրաչ Խոջեմալի խրախուսանքների ու խորհուրդների շնորհիւ յաջողել է մասնակցել բազկամարտի մասնագիտական մրցաշարերին: 2007 թականից մասնակցելով Սպահան նահանգի մակարդակով կազմակերպուող մրցոյթներին, արժանացել է 13 մեդալների՝ 4 ոսկի եւ 9 արծաթ: Իսկ երեք տարի անընդմէջ մասնակցելով Իրանի տղամարդկանց բազկամարտի առաջնութեան մրցաշարերին՝ ստացել է երեք արծաթէ մեդալներ: Երկու տարի է ինչ անդամակցում է Իրանի տղամարդկանց բազկամարտի հաւաքականին՝ զուգահեռ մասնակցելով թէ ձախ եւ թէ աջ ձեռքերի մրցումներին՝ 100 կիլօ կշիռ ունեցողների խմբում:



2011 թականի սեպտեմբերին, երկրի տղամարդկանց բազկամարտի հաւաքականի հետ մեկնել է Ղազախստան, որտեղ կայացած Ասիայի առաջնութեան մրցոյթում զբաղեցրել է չորրորդ տեղը, իսկ խմբային կարգով Իրանի հաւաքականը հանդիսացաւ երկրորդ: 2012-ի Ասիայի առաջնութեան մրցաշարը տեղի ունեցաւ յունիս ամսին, Իրանի Գորգան քաղաքում, որտեղ Օշինն արժանացել է հինգերորդ կարգին, իսկ Իրանի հաւաքականը գրաւելով առաջին տեղը՝ դարձել Ասիայի ախոյեան:

Ստանալով բազկամարտի իրաւարարութեան վկայագիր՝ որպէս իրաւարար 2009 թականից մասնակցել է Սպահան նահանգի մակարդակով կազմակերպուող մրցաշարերին եւ Իրանի առաջնութիւններին:

2012-ին Իրան ժամանեց Ասիայի բազկամարտի իրաւարարների կոնֆետերացիայի նախագահ, Ճապոնացի պրն. Ամուրան, որը յատուկ քննութիւններից յետոյ, Օշինին եւ մի քանի այլ իրաւարարների շնորհեց միջազգային իրաւարարութեան թոյլտուութիւն:

Օշինն ունենալով մարմնամարզութեան երկրորդ կարգի մարզիչի արտօնագիր՝ զբաղւում է մարզիկների վարժեցմամբ, իսկ լինելով Սպահան նահանգի Բազկամարտի Յանձնաժողովի անդամ՝ աշխույժ գործունէութիւն է ծաւալում նաեւ այնտեղ:

ԱՏԱՑԻԱԾ ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Օանդ հիանդների օգնության ֆոնդ

- 600,000 ուս. Ն.Ձ. Հայոց Ազգային «Քանանեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական Խորհուրդ՝ Արամ Ղարախանեանի յիշատակին:

Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն

«Մայրերի Օր»-Հայ առթիւ

- 150 Ա.Մ.Ն. դոլար. Էդիկ Պարսամեան՝ իր հանգուցեալ մօր յիշատակին:

- 200,000-ական ուս. Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութիւն, Արեգա Ծատուրեան, Ասանէթ Յակոբեան:

- 150,000-ական ուս. Սոնիկ Կիրակոսեան, Վարսէնիկ Օրոջեան, Արմինէ Հայրապետեան:

- 100,000 ուս. Լորիկ Բաղդասարեան:

120-ամեակի առթիւ

- 1,000,000 ուս. Լեւոն Գ. Մինասեան:

Ս. Հռիփսիմեանց Կոյսերի Տօնի առթիւ

- 200,000 ուս. Մագի Հայկունեան:

- 100,000 ուս. Սոնիկ Կիրակոսեան:

- 50,000 ուս. Համազ Աբրահամեան:

Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցու Վարչութիւն

- 5,000,000-ական ուս. Վազրիկ Մարկոսեան, Հրանդ Նազարեան:

- 500,000-ական ուս. Մինաս Թահմազեան, Հրայր Աբէլեան, Առիւծ Խաչիկեան:

- 400,000-ական ուս. Վազրիկ Մարկոսեան, Սուրէն Ղարիբեան:

- 300,000 ուս. Յովհաննէս Քեշիշեան:

- 220,000 ուս. Հերոս Ծատուկեան:

- 150,000 ուս. Հայկազ Ղազարեան:

- 100,000 ուս. Ռազմիկ Յովհաննիսեան:

- 2 հատ ջեռուցիչ՝ 5,000,000 ուս. արժողութեամբ Օշին Սահակեան:

Ճահիղահրի Հայ Համայնքի Վարչութիւն

- 600,000 ուս. Մինաս եւ Արմինէ Մելքոնեաններ՝ իրենց հօր՝ Սուքիազ Աւետումեանի յիշատակին:

- 150,000 ուս. Շահէն եւ Հրանուշ Տէր-Յովհաննիսեաններ:

- 100,000 ուս. Գայիանէ Վարդանեան՝ Ս. Ասուածաձանի Վերափոխման Տօնի առթիւ:

Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն

- 150,000 ուս. Ռիթա Գրիգորեան:

- 100,000 ուս. Մանուշ Երիջանեան:

- 75,000 ուս. Փառիսա Ղուսի(2):

- 50,000-ական ուս. պրն. Շափուր, Մանուշ Ղեւոնդեան, Արմինէ Կարապետեան:

- 40,000 ուս. Մարիամ Աբրահամեան:

- Վարենի. Քրիստ Պողոսեան:

- Խմորեղէն. Անետ Ղազարեան(2), Անահիտ Քիլիջեան, Ռոզիկ Մինասեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Անետ Ղազարեան, Նորա Զարդն Դատուր, Ալվարդ Աղախանեան, Վալերիկ Տէր-Մկրտչեան, Փառիսա Ղուսի, ոմն(2):

- Պտուղ. Էլօ Տէր-Սուքիասեան, Մարօ Տէր-Յովհաննիսեան, Նարդ Շահնազարեան, պրն. Ֆալլահիփուր, ոմն:

- Հրուշակ. Թագուշ Բաշիկեան՝ օրդ. Անահիտի յիշատակին, Ալվարդ Աղախանեան, Վալերիկ Տէր-Մկրտչեան:

- Սուրճի հիւրասիրութիւն. Վիկուշ եւ Վերժիկ Գրիգորեաններ, Զեփիւռ Վարդեանեան, Անահիտ Երիզեան, Լորետա Գալստանեան, Ժանետ Ինիքեան:

- Սուրճ. Արաքս Խուդավերդեան-Մաթեան, ոմն:

- Բուժարանի սալան. Մերի Մինասքանեան:

- Թէլն բժակ. ոմն:

- Թէլ. ոմն:

- Խորոված. Անի Վարդեանեան:

- Միս. պրն Ֆալլահիփուր:

- Հաւ. տկն. Գուդաուզի:

- Գազ. Փառիսա Ղուսի:

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն

- Մէկ սառնարան. Սալիկ եւ Գասպար Մարտիրոսեաններ՝ Սողոմոն Մարտիրոսեանի յիշատակին:

- 500,000-ական ուս. Ն.Ձ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Արամազդ Խաչեան:

Աշուղական եւ ժողովրդական երգերի երեկոյի առթիւ

- 1,000,000 ուս. Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհուրդ:

- 300,000 ուս. Նոր Զուղայի Հայ Դատի Յանձնախումբ:

- 200,000-ական ուս. Կարին Տէր-Մարտիրոսեան, Շաքէ Մովսիսեան:

Սկառուական Միաւորի 35-ամեակի առթիւ

- 1,000,000-ական ուս. Լուսինէ Սէթաղայեան, Նարինէ, Նիկէ եւ Նարեկ Բարդեաններ, Լիանա եւ Էրիկ Ղազարեաններ:

- 700,000 ուս. Դերենիկ եւ Դաիթ Թորոսեաններ:

- 600,000-ական ուս. Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութիւն, Արտեմ Թորոսեան, Անի եւ Վանէ Ղազարեաններ, Մանիա, Միրնուշ եւ Մեղրի Ղուկասեաններ:

- 500,000-ական ուս. Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կարգապահական Կազմ, Ռոբերտ Սիմոնեան,

Տարեկի եւ Յասմիկ Տէր-Մարտիրոսեաններ, Նարինէ Մեղեդի եւ Լիլիան Քեշիշեաններ, Դիմ Յովհաննիսեան, Հայկ Խոսրովեան, Նարեկ եւ Էմմանուէլ Սիրջանեաններ, Վանէ Յովսէփեան, Վահան եւ Վահագն Վարդեանեաններ, Արփա Մարգարեան, Արսիս Ըիրակ Միրզայեան, Արութից եւ Սիսիան Քալանթար-Օհանեաններ, Նարեկ Մարկոսեան եւ Էջմից Խաչիկեան, Լիլիթ եւ Լուսին Յովսէփեաններ, Արփիար Դաւթեան:

- 400,000-ական ուիալ. Մարգարիտ Դաւթեան, Զարեմ Ղարախանեան, Մասիս Սիրջանեան, Նարեգա Սիմոնեան, Նարէ Մարկոսեան:

- 350,000 ուիալ. Հ.Յ.Դ. «Ռուբէն» Երիտասարդական Միութիւն:

- 300,000-ական ուիալ. Հ.Յ.Դ. «Թաղէս Թաղէսեան» Պատանեկան Միութիւն, Առնօ Բաբումեան, Լէօ Շահիջանեան, Վանիա Պետրոսեան, Վեհանուշ Խուդաբախշեան, Վարազ եւ Մեղրի Փանոսեաններ, Հրաչ Տէր-Յովհաննիսեան, Արնէ եւ Մանիֆա Մանսուրեաններ, Գեղարդ Մանսուրեան, Ժորժիկ եւ Քառոյից Մատթէոսեաններ, Վերգիլէ Միրզախանեան, Նարէ Ղարախանեան,

Արգից եւ Ըիրակ Օրոջեաններ, Էմիլիէ Կիրակոսեան, Մարտիկ Յարութիւնեան, Անիա Անդրիասեան, ոմն:

- 250,000-ական ուիալ. Լեոնիկ եւ Համբիկ Ալազեաններ, Մելիկ Բաբախանեան, Արէն Զարգարեան, Մելիկ Թորոսեան:

- 240,000 ուիալ. Մանիֆա Պարսամեան:

- 200,000-ական ուիալ. Մեղրի Ակոն, Արթին Վարդանեան, Յովիկ եւ Սիլա Աղախանեաններ, Ն.Ջ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միութեան Երէջների Միաւոր, Արմինէ Սիմոնեան, Քրիստինէ եւ Դերիկ Յակոբեաններ, Յաւերժ Յակոբեան, Աֆօ Միրջանեան, Թաղէ Ղարիբեան:

- 150,000-ական ուիալ. Սերիլէ Թահմազեան, Լորեսո Ասատրեան, Քլարիս Գրիգորեան, Հանրի Հաթամեան, Անդրու Ալեքսանդրեան, Վանէ Տէր-Մարտիրոսեան:

- 100,000-ական ուիալ. Մասիս Մինասեան, Սելին Խոջամալ, Արութից Առաքելեան, Վանէ Յարութիւնեան, Արազ Տէր-Գրիգորեան, Լիլիան Ասատրեան, Սեպուհ Վարդանեան, Մանիա Բեգիջանեան, Անի Մկրտչեան:

- 50,000 ուիալ. Արեգ Յարութիւնեան:



Շարունակութիւն՝ 25-րդ էջից

ՃԱՎՈՆՃԱՎՈՐ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԼՉ-ՆԱԽԱԿՐՈՒՄԱՆԻ...

լինել «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի ամսվերջի հանդէսին: Մեր սաներն այս բեմի վրայ ցոյց տւեցին, որ իրենք ամբողջ տարւայ ընթացքում սովորել են Այբ-Բեն-Գիմը, արտասանել, երգել, թատերական պատկեր ներկայացնել: Իմ գնահատանքի խօսքն եմ ուղղում «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեանը եւ ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ Ծնողական Խորհրդին, ովքեր միշտ զօրավիգ են նրանց: Գնահատում եմ նաեւ այս փոքրիկներին: Մենք հպարտ եւ ուրախ ենք ձեզանով: Աստուած օրհնի ձեզ»:

Ծրագրի աւարտին տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն եւ բոլորը բաւարարւած հրաժեշտ տւեցին ուսումնական տարեշրջանին:

Առաջնորդարանին, կրօնական արարողութիւններին եւ ազգային կառույցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստել է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, «Արարատ» Միութեան առնչուող լուրերը՝ օրդերանուշ Թահմազեանը, համայնքային լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Ադրինէ Իսայեանը:
«Ալիք»-ի թղթակցութիւնների եւ մի շարք ծրագրերի լուսանկարները տրամադրել է Գեւորկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՅԵՆ
خليفه گری ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98-311-6243471-2
Fax: +98-311-6270999

ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ 120-ԱՄԵԱՅ



Ս. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ
ԵԿԵՂԵՑԻՆ